

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ .	Օրագիր եւ Լրագրութիւն.....	Մ . Ն . ՆՈՐԻԿԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ .	Ֆիլոսոֆիա . — Տաճկաստանի վիշտերու վրայ վիշտ մ'եւս.....	Ն . ՏԱՂԱՒԱՐԵԱՆ
ԸՆԿ . ԽՆԴԻՐՆԵՐ .	Դրամագլուխ եւ Աշխատութիւն	ԵԱՆՔԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ .	Դժնդա՛կ մայիս (ՊԵՒԷԼՈՆԻ) Թարգմ.....	ԱՐՍՈՒԿԷՍ
ՆՈՐԱՎԷՊ .	Գլանիկը	Յ . ՏՈՒՏՈՒԹԵԱՆ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ .	Տրապիզոն	Մ . ՉՕՊԱՆԵԱՆ
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ . ԼՐՈՅ	Արտաքին , Ներքին , Ազգային.....	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ .	(Կղավիէ տը Մոնթէքէն) Թարգմ.....	

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ . ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ձրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դան . արծաթ
Մէկ թերթին ԳԻՆՆ Է.....	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ



Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Դպարան, Նորատուրկեան խան

Կ . ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԿԱՐԵԻՈՐ Ա.ԶԴ

ՄԱՍԻՍԻ բաժանորդները թերթ ԶՊԵՏԻ ՄՍԱ-
ՆԱՆ յառաջիկայ Օգոստոս 1 է վերջ՝ եթե իրենց
բաժանորդագրինը չ'փութան հասցնել առ Տնօրէնու-
թիւնն մինչեւնոյն թուական :

ԱՅՆ ԲԱԺԱՆՈՐԴ-Ք որոց պայմանաժամը կը լրա-
նայ Օգոստոս 1 ին, պարտին նորոգել զայն անյա-
պաղ, եթե չ'են փափաղիր որ թերթերու առաքու-
մնը հատուի :

Տարեկան բաժանորդագրինն է

ԳԱԽԱՌԱՅ համար, 69 ՂՀ հանդերձ թղթատա-
րութեան ծախիւք :

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐԻՆ համար, 15 Ֆրնք. նոյնպէս .

ՊՈԼՍՈՅ համար կէս Ոսկի Օսմ. առանց թղթա-
տարութեան ծախուց :

Գաւառաց եւ Օտար երկիրներու համար
վեցամեայ բաժանորդագրութիւն չ'կայ :

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 21 Յունիս

ԸՆԹԱՅԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս (անորայի վրայ պանքայի)	111 1/4
3 » » » (վճարին)	110 7/8
3 » Բարելի » (պանքայի)	22 72 1/2
» » » (վճարին)	22 80

ԸՆԹԱՅԻ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Քոնստանտին

	Դահեկան
Երեկ երեկոյ քոյ. (Միաց. D. Սէշի	48 10
Պօրային քոյուէլէն վերջը »	48 11
Բերայի մէջ »	—
Առաւօտուն բացուեցաւ »	48 11
Բարձրագոյն գին »	48 12
Նուազագոյն »	48 11
Կէս օրին »	48 12

Փոխառութիւն 1858)	
» 1862) A. Սէշի Գ. Կ. Ա. Ո.	32 30
» 1860)	
» 1863) B. » . Կ. » »	48 20
» 1872)	
» 1863)	
» 1869) C. » Գ. . Բ. »	48 40
» 1873)	

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ երեկուն քոյուեցաւ	72 15
Այս առաւօտ բացուեցաւ Գ. Կ.	72 15
Կէս օրին	72 15

ԲԱԺՆԵՏՈՒՄ

Սօրիւթէ Ժէնէրալ.....	Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 22
Քրէտի Ժէնէրալ.....	» » Օսմ. »	7 2
Պանք տը Գ. Սնս.....	» » » »	4 35
Սոս. Շանժ է Վարէօր.....	» » » »	3 32
Թրամուէյ.....	» » » »	290
Բուժէլիի երկաթուղի.....	Ֆր.	42 50
Սպիկասիօն տը Բրիօրիթէ.....	»	382
Բաժնէթուղթ Լաւրիօմի.....	»	60

ԵՐԻՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոտոն, 2 Յունիս, ժամ 5 վայր. 15 երեկոյ	
Անգլ. քոնսոլիտէ	99 5/4
Օսմ. » Սէշի Գ. բացուեցաւ	16 9/16
» » » քոյուեցաւ	16 5/8
» » » Ա.	33
» » » Բ.	18 5/8
» » » Գ.	16 5/8
Օթման 1871	68
Փոխառութիւն 1877.....	81
Պանք Օթման	41 1/8
Բուսական փոխառ. 1873.....	93 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	65 1/8
» առանձն. (Երկրիւթիէ)	87
Տայրա Սանիէ	62 1/4
Տօմանիւլ (փոխառ. Բօչիլտ)	84
Հունգարական պարտաթուղթ 40/0.....	—
Փոխանակութիւն Բարիդի վրայ	—
Վիէննա, 2 Յունիս, ժամ 4 երեկոյ	
Փոխանակութիւն Լոտոնի վրայ	124 50
Օսմանեան երկաթուղի	20 50
Բարիդ, 2 Յունիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....	110 20
» » 3 0/0.....	84 07 1/2
Օսմանեան քոնսոլիտէ Սէշի Գ. բացուեցաւ	16 70
» » » քոյուեցաւ	16 65
» » Սէշի Բ.	18 25
» » Գ.	16 60
Օսմանեան երկաթուղի	42
» Բէժիի բաժնէթուղթ.....	—
Պանք Օթման.....	550
Դրէտի Լիօնէ	—
» Ֆօնսիէ	1352 50
Բաժնետոմս Լիոնի	1252 50
Սուէզի ջրանցք	2142 50
Բուսական 5 0/0 1877 ի.....	100 1/4
Իտալական Ռանթ	97 72 1/2
Եգիպտական միացեալ	328 75
Սպանիական (արտաքին).....	59 5/8
Բրիօրիթէ Բիւրք.....	390
50/0 Հիլլենական	337 50
Չէք Լոտոնի վրայ	25 20

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34րդ ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆԻՍ 22

ԹԻԻ 3775

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ.

Ցեղափոխութենէն 10-15 տարի յառաջ գրական հրապարակը ողորդեցաւ անհամար գրողներով։ Կարծես եռացող լավ մը կ'ընթանար Փարիզի մէջ, եւ քաղաքը խռովութեամբ կը յուզուէր։ քիչ մը գրել գիտցողը տաղանդ մ'ունենալ կը կարծէր։ Նօթութենէ մեռնող հեղինակներ կը վխտային։ Իսկ լրագրութիւնը գրչակներու եւ բաղդախնդիրներու ձեռքը խաղալի մ'եղաւ։ 89ին 250 եւ 90ին 350 նոր թերթեր սկսեր էին հրատարակուիլ։ «Ծիծաղելի բան մ'եղաւ լրագրութեան արհեստը, կ'ըսէ Մառա. մարդ մը կը տեսնես որ լրագրի մը մէջ մի քանի տող բան գրելէն ետքը չգիտեր ի՞նչ ընէ։ Կ'ընէ թերթ մը կը հրատարակէ բաղդը փորձելու համար. դատարկադուխտ անիմաստ, գաղափար չունի, կարծիք չունի, կ'երթայ սրճարանները կը նստի, լսածները միտքը կը պահէ, ի դարձին թըղթի մը վրայ կը նշանակէ, տպագրիչին կը տանի կը յանձնէ եւ հետեւեալ օրը խնդրը կը գնեն։ Բարեկամք, ձեր ժամանակը փոխանակ վատնելու այդ յիմար արհեստով ինչո՞ւ հրապարակը չէք ելներ, չքաւորները չէք հաւաքեր եւ անոնց գլուխն

անցած չէք երթար բռնադատել ժողովը, աղքատաց ապրուստը յախտակող եւ պետութեան տղրուկներուն տուող ժողովը, որ հաց տայ ձեզի երբ կարող չըլլաք ճարել զայն ձեր բաղդակներով»։ Եւ սակայն այդ «բարեկամները» աւելի հեշտ կը դռնէին թուղթ մրտելը. եւ իրենց մրտած թըղթերէն շատ վաճառելու համար փոխանակ թերթին անունը տալու, հետաքրքրական բացատրութիւն մը; դէպքի մը ակնարկութիւն ընող բաւ մը կամ ամբողջ բովանդակութիւնը կանչել կուտային հրապարակին վրայ։ Ահեղագոյ ձայն մը լրագրավաճառի մը համար լաւ յանձնարարական մ'էր։ Այս բաւական չեղաւ. չէնքերն ալ հոգի մ'ըղգեցան, կ'ըսէ Լուի Պլան, քարերը կը խորհէին եւ պատերը կը խօսէին. վասն զի վերէն ի վայր ամէն տեսակ թղթերով ծածկուեցան եւ սակայն քանի՜ սուտեր, քանի՜ զրպարտութիւններ չխօսեցան այդ պատերը։ Ասոր համար էր որ անդադար առաջարկողներ եղան ժողովույ մէջ լուեցունել այն չարածիճիկները, լրագրիւնները եւ ծանուցումները, որոնք յեղափոխութեան արգելք էին. երեսփոխան մ'ալ կը պահանջէր որ լրագրավետութիւն ընող երեսփոխանները կա՛մ դադրին կա՛մ այդ արհեստը թողուն։ Երբ Գովիւնը եկաւ՝ հրամայեց հանրային կարծիքը թունաւորողները, այսինքն հակա-յեղափոխական թերթերու հրատարակիչները ձերբակալել եւ անոնց մամուլները, տառերը եւ գործիքները հայրենասէր տպագրիչներու բաժնել։ Տիւնքթօսուի ատեն ալ վաթսուսի չափ օրագիրներ խախտուեցան. խմբագիրք արսորանաց դատապարտուեցան. մնացեալները ոստիկանութեան հսկողութեան տակ դրուեցան եւ որոշուեցաւ որ

ամէն հրատարակիչ իւր թերթէն մի մի օրինակ յղէ ոստիկանութեան պաշտօնատունը :

1789 էն մինչեւ 1800, որ ըսել է 11 տարուան միջոցին, 1400 օրագիր կամ պարբերական թերթ հաշուած են Ֆրանսա հրատարակուող . նիւթերու առատութենէն ստիպեալ եղան թերթեր՝ որ յաւելուածներ ալ տպեցին ամենօրեայ, նախ թատրոններու եւ ծանուցումներու յատկացեալ, յետոյ տեսակ մը բեմ եղան որ կը վարձուէր ասոր անոր եւ ընդդիմամարտ կուսակցութեանց կարծիք կ'ըլլային : Լրագրապետները շատ կը շահէին այդ յաւելուածներէն . «Ժողովրդական» կը վարձուէր . 10 տողէ պակաս յօդուած մը 5 ֆրանք : «Մոնիթօր» որ Ա. Հանրապետութեան Յրդ տարին պաշտօնական եղած էր, 720 ֆրանք կ'ստանար կէս թերթին, 125 ֆրանք մէկ սիւնին եւ 26 սու մէկ տողին համար, եւ սակայն ո՛չ սիւները երկար էին, ո՛չ տողերը լայն : Միաժալ մեծ գիրքը այս դարուն սկիզբէն ի վեր է որ օրագրիներու վերջնական ձեւն եղաւ . Բանքուք՝ որ «Մոնիթօր»ի հրատարակիչն էր՝ առաջին անգամ անգղիական մեծ թերթի տարածութեամբ հանել սկսաւ այդ օրագիրը որուն երեք օրինակէն միան մը կրնար ձեւանալ կ'ըսէին :

Պէրթէն եղբարը 1799ին գնեցին «Ժողովրդական» եւ «Տէպա» թերթ մը որ 10 տարուանէ ի վեր կը հրատարակուէր . թերթօնները ասոնք հնարեցին :

* * *

Պոնաբարթ երբ իշխանութեան անցաւ, իւր առաջին գործերէն մին եղաւ Փարիզի թերթերուն թիւը 15ի իջեցունել . միւս 75 թերթերը խախտուեցան բացի գիտական եւ արուեստականներէ . խտիւ արգիլեց նոր թերթերու հրատարակութիւնը :

Այն ատեն հրատարակուած ամէն տեսակ պարբերական հանդէս, օրագիր եւ 68 կը հաշուէին եւ 40 հազար օրինակ անոնցմէ գաւառները կը յղուէին . Փարիզի մէջ ալ այնքան բաժանորդ ենթադրելով ասոնց թիւը 80,000ի կը հասնէր : Ամենէն աւելի գաւառները զրկուող թերթն էր «Տէպա», 8150, եւ յետոյ կուգար «Կաղէթ տը Ֆուան», 5250 :

Տէպաի յաջողութիւնը այն «թերթօններուն» շնորհիւն էր . մինչեւ այն ատեն ուրիշ լրագիրներ չէին մտածեր այդ նորութիւնը . բայց յետոյ, ամէնքն ալ անոր հետեւեցան :

Ժօֆրօյ բանադատին ձեռաց մէջ աւելի յաջող գնաց Տէպա : Այն ատեններ լրագրական ազատութիւն չկար, գոնէ լրագրոյն քաղաքական մասին մէջ . ուստի թերթին վերի յարկէն փախչող ազատութիւնը, ներքնայարկին մէջ կ'ապաստանէր եւ հոն գրական նիւթոյ մը կամ թէ թատերգութեան մը անուան ներքեւ քաղաքական ամէն տեսակ խնդիրները կը յուզէր : Վերջ ի վերջոյ Տէպա եղաւ «պետական լրագիր» եւ ունեցաւ 32000 բաժանորդ . բայց Պէրթէն եղբարց այդ բաղդը ամէնուն նախանձը եւ ցանկութիւնը չարժեց . ինչ գեղեցիկ բան . 200 հազար ֆրանք տարեկան զ՛ուտ չահ : Ֆուլէ ինքն իսկ, ոստիկանութեան նախարար՝ որ հոգին էր գերերջանիկ օրագրին դէմ լարուած դաւադրութեան՝ կասկածելի ցոյց տուաւ զայն Պոնաբարթի . 1805 ին ըննիչ մը կարգուեցաւ վասն սկիզբն երկանց . եւ 1811ին պարզազապէս «Տէպա» գրաւուեցաւ պետութեանէն : Հասոյթը 24 մասերու բաժնուեցաւ . Յը ոստիկանութեան, 16ը քանի մը գրագէտներու եւ պալատականներու : Այսպիսի յափշտակութիւն մը երբեք տեսնուած չէր : Իբրեւ պատերազմական աւար գրաւեցին ամէն ինչ որ լրագրին գոյքը կը կազմէին, գրամ, թուղթ, կարասիք եւ : Չոհը միայն «Տէպա»ն չէր . Ժողովրդական, Ռէօտէրէի եւ կոմս Պասսանօի սեփականութիւնն էր . կու բարձր պաշտօնեայքնոյն բաղդին վիճակեցաւ : 1811 սեպտեմբեր 11ի հրամանագրով քաղաքական ամենօրեայ թերթերու թիւը երեքի իջաւ . ասոնք են, Մոնիթօր, Ժողովրդական, Լա Կաղէթ, Գաւառ, որոնք մինչեւ այսօր կան : Միւս 10 լրագիրներուն անուններն էին . Journal de Paris, Bien informé, Publiciste, Ami des lois, Chef du cabinet des Souverains, Citoyen Français, Journal des hommes libres, Journal du Soir, Journal des défenseurs de la Patrie, Décade philosophique.

Այս միջոցին քաղաքականութիւնը երկրորդական դեր մը կը կատարէր, մինչդեռ

գրադիրութիւնը մեծ տեղ մը կը գրաւէր լրագիրներու մէջ: Երբոր Էլլա կղզիէն դարձաւ Նաբոլէոն, ազատ թողուց մամուլը, համոզուած թէ, կ'ըսէր, այդ ազատութեան բարձումը չէր կրնար յարմարիլ այն նոր դրութեան հետ որով կը խոստանար օգտել երկիրը. ուստի եւ այս միջոցին (չարիւր օրեր) 20 լրագիրներ աւելցան որոց մին եղաւ Գոնիէն-Էնի:

Պուրպօններու վերահաստատութենէն ետեւ լրագրութիւնը մերթ ազատութիւն վայելեց, մերթ սեղմումներու ենթակայ եղաւ, որով անգուլ մաքառում մը ծագեւ էր կառավարութեան եւ մամուլ միջեւ. բայց յուլիսի յեղափոխութիւնը (1830) յաղթանակ տարաւ խոստութեան վրայ: Լուգովիկոս Ժ. «Մէնքեր» կամ «Հէռմէս Ռօմանուս» լատիներէն թերթն և ուրիշները կը պատուէր իւր յօդուածներով եւ կեղծ ստորագրութեամբ: Մասնաւորներու ուղղուած պաքներ կը դնէր այս յօդուածներուն մէջ, թերեւս իբրեւ հեղինակ քննադատութեան ենթակայ ըլլալու եւ իբրեւ թագաւոր քննադատ մը պատժելու զխոնարհ: Նէ-Ժոն, իւր ժամանակի Ֆէլաւօն, լաւագոյն յօդուածները կը հիւրընկալէր վեհապետին: Ամենէն աւելի ժողովրդական թերթն էր Գոնիէն-Էնի, որ 22 հազար բաժանորդ եւ 600 հազար փրանք եկամուտ ունեցաւ: Ժոն-Էնի Տեղաւոր անկէ ետքը կուգար առանց նայելու որ Շաթօպրիան, Նիքո, Սալվանտի եւ այլ նշանաւոր անձինք խմբագիրներն էին: Անգամ մը Վիլլէլ պաշտօնեայն նոր տուրքի ծրագիր մը սլաշտպանելով, հաշիւ կ'ընէր որ 20 հազար բաժանորդ ունեցող լրագրի մը պէտք եղած գրամագլուխը միայն 20 հազար փրանք է, տարեկան ծախսը 684,405 փրանք եւ եկամուտը 1,440,000, որմէ կը մնար զուտ շահ 755,595 փրանք: Է՞ր, կ'ըսէր ուրեմն, լրագրապետը չափի կարենան վերցունել իմ առաջարկած տուրքս: Առանձնական շահերու այս օրինակ միջամտութիւն մը շատ դժգոհ ըրաւ լրագրապետները, ուստի եւ Տեղաւորատաւանելով հարցուց պաշտօնէին թէ կրնա՞ր ապացուցանել որ պետական նախարարի մը պէտք ըլլայ ունենալ աւելի գրամագլուխ քան զայն որ ունէր Անգամ երբ աչքը բացաւ երկրային դրախտին մէջ: Յարգի եղաւ նաեւ Մէնքերը

անուամբ հրատարակութիւն մը Ֆրանսայի մէջ Պուրպօններու ժամանակ, Պէն-ժամէն Գօնպիան եւ Էթիէնի վարչութեան ներքեւ: 1820 ին 137 եւ 29ին 307 օրական կամ պարբերական թերթ կը հրատարակուէր Բարիզ, Շաթօպրիան, Պօնալ Ֆիէվր, Լընուար, Լամբէի խմբագրութեամբ. կային նաեւ Ալլօ, Միսօ կամ Բանօ, որուն համար խմբագրեց նաեւ Լուգովիկոս Ժ. ու Ֆէլաւօ, զոր հիմնեցին 1826 ին Մօրիս Ալէօյ եւ Լըքօաթվէն Սէնթ-Ալֆ, աշխատակից ունենալով Ժիւլ Ժամէն, Ռօքքլան, Լէօն Կօզլան, Ալֆօնս Գառլ եւ ուրիշ երեւելի գրագէտներ:

* * *

Մամուլը երբեք ազատութիւն չէր վայելած Ֆրանսայի մէջ որքան յուլիսի յեղափոխութենէ ետքը—1830: Ասոր ապացոյց դատերու յաճախումը: Միայն Թիէպօն լրագիրը 111 դատի կանչուեցաւ, 20 անգամ դատապարտուեցաւ. չորս տարուան չրջանի մը մէջ կրած բանտարկութիւններուն դուրս մարը 49 տարիի եւ տուգանացը 157,650 փրանքի հասաւ: Լրագրաց բաժանորդները 80 փրանքի բարձրացեր էր. դիւրագին լրագրութիւն մը աւելի կրնար նըպաստել ժողովրդի մը սահմանադրական կրթութեանը, մինչդեռ հազիւ 70 հազար լրագրի բաժանորդ կը հաշուէին 25 միլիոն բնակչաց վրայ: Էմիլ Ժիրարտէն խնդիրը լուծեց տարեկան 40 փրանք վարձքով օրագիր մը հաստատելով, Բուէր, որն որ այս տարի միայն դադարեցաւ: Միայն Տեպօն է որ 80 փրանք բաժանորդագիրն անփոփոխ կը պահէ առանց վնասուելու: Դիւրագին լրագրութիւնը կրնայ ապրիլ սակայն ծանուցումներով. քաղաքական լուրերն ալ որ երբեմն իւր գլխաւոր սնունդն էին, ոչ եւս ունէին առաջին հրապոյրը ընթերցողաց համար. ուստի հրատարակիչք բաժանորդաց թիւն աւելցունելու համար ուրիշ հրապոյր մը խորհեցան հնարել. մինչեւ այն ատեն թերթօնները լոկ յօդուածներ էին բանադատական. այնուհետեւ գրեթէ փրանսական բոլոր գրադիրութիւնը թերթօններու մէջ դրին:

Թերթօն-վէպը մանաւանդ նպաստեց լրագրութեան թափանցել եւ ներածել ամենէն խոնարհ տնակներու մէջ. վիպասան

հեղինակները խոշոր վարձքերով կը վարձատրուէին : Փոքր թերթերը շատ փայլեցան այն միջոցին . Ֆիլիքսոն 1851 ին հաստատեց *Շառլէրէ* պարբերականը եւ *Քառնիս*, պատկերազարդ : Այս երգիծական լրագիրներուն առաջինը մանաւանդ՝ *Շառլէրէ* ծանօթ է մեզի . եւ շատերը պէտք է նշարած ըլլան որ ոչ ոք կրցաւ տալ պատկերներուն այն նուրբ եւ խօսուէն բացատրութիւնն որ ճարտար Քամի մատիտին յատուկ էր :

Չմոռնանք յիշատակել այն մանրագիր հանդէսները , Ալֆոնս Գառուի նորութիւնը , (1859) , ինչպէս Կէք եւ նմանները , բոլորն ալ կարեւորութենէ զուրկ :

Մ . Ն . ՆՈՐԻԿԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՖԻԼՈՔՍԵՐԱ

ՏԱՃԱՍՏԱՍՆԻ ՎԻՇԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԻՇՏ ՄԵՒՍ

Ֆիլօքսէրա անուանեալ այգիներու արիւնդուտ թշնամի մանրագէտ միջատն , Ամերիկայի եւ Եւրոպոյ այգեստաններու մէջ մեծ կոտորածներ կատարելէ վերջ , կ'այցելէ այժմ մեր այգեստաններն ալ եւ արդէն իւր հարուածոց աղէտներն սկսած են : Այս ահեղ թշնամոյն գալուստն մեծ դժուրութեամբ պատճառեց երկրագործական տեսչութեան մէջ : Լրագիրք արձագանգ տուին : Ժողովուրդը պաղ արիւնով կը կարգայ եւ կը լսէ նորա գալուստն , զի չի ճանաչեր այդ մանրագէտ թշնամոյն մինչեւ ցարդ հասուցած վնասուց չափն եւ չէ կարող իսկ երեւակայել այդ ամենափոքրիկ էակէն մեծամեծ հարուածներ : Թող ներուի ինձ որ աստ յիշեմ նշանաւոր միջատաբան Էմիլ Պլանշառի Փարիզու երկրագործական համալսարանին մէջ Ֆիլօքսէրայի առթիւ մեզ ըրած դասուն սա հատուածն թէ « Ֆիլօքսէրան աւելի վնասեց Ֆռանսայի քան 1870 ի պատերազմին » . ընթերցողն անշուշտ կը զարմանայ լսելով փոքրիկ էակի մը վերագրեալ այսչափ մեծ աղէտներ . ես իւր այս զարմանքը փառատելու մտադրութեամբ կ'ուզեմ գաղա-

փար մը տալ այգեբաններու այս աննկուն թշնամոյն առթիւ որոյ 20 տարիներէ ի վեր տուած շարունակական հարուածները զինքն աշխարհահռչակ ըրած են :

Այգեբաններ , կենդանաբաններ եւ միջատաբաններ շարունակ միջոցներ կը խորհին այս սոսկալի թշնամոյն յաղթելու համար . մինչև ցարդ առաջարկուած բազմաթիւ միջոցներու հազիւ մի քանիներն կիսով մը կը յաջողին , այն ալ բացառիկ պարագայներու մէջ միայն կը գործածուին : Միւս կողմանէ տնտեսագէտներ հաշիւ ի ձեռին սորա ամուլ դարձուցած հողերն , ապականած այգիներն , սնանկացուցած այգեգործներն եւ հասցուցած ամեն կարգի վնասները կը քննեն , կը գնահատեն եւ այս թշնամոյն երկրին տուած վնասները միլիոններու կը հասցունեն . այս անողորմ թշնամին կ'ապաւնայ դեռ քիչ ժամանակէն այգիները բոլորովն անհետացունել : Կառավարութիւններ երբէք անտարբեր չ'են , քաւ լիցի , ամեն կարգի օգնութիւններ կ'ընեն . ամեն երկրի մէջ այս միջատին ջնջման համար ժողովներ կան կառավարութեան կողմանէ , որք միշտ կ'աշխատին : Ֆրանսայի կառավարութիւնն 500,000 Փրանքի պարգեւ մը կը խոստանայ սորա ջնջման մի միջոց գտնող անհատին : Եւրոպական ուրիշ կառավարութիւններ նմանապէս կ'աշխատին եւ պարգեւներ յատկացուցած են այդ աննկուն , անտեսանելի միջատին յաղթողին :

Այս կենդանիի նկատմամբ կենդանաբանական եւ պատմական տեղեկութիւններ տալով պիտի թուեմ ջնջման համար մինչեւ ցարդ գործածուած միջոցներն :

Կենդանաբանական — Ֆիլօքսէրան կիսաթեւեանց կարդէն եւ աչքով անտեսանելի վեց ոտք ունեցող միջատ մ'է . ընդհանրապէս անթեւին մի մասն զոյգ մը թեւ կ'ունենայ վերջն :

Մայրերու արմատոց վրայ կը բնակին խումբ խումբ , նորա արիւնն (sève) ծծելով կ'ալրին մինչեւ որ այն արմատն կ'ախուզնայ եւ սկսի նեխիլ . յայնժամ զայն ձգելով ուրիշ արմատներու վրայ կ'երթան եւ այսպէս շարունակաբար : Սոքա էգեր են , միշտ հողին տակը կը բնակին , միշտ կ'ածեն առանց արգասաւորելու ամեն անգամին դը-

րեթէ 50 ական ձուեր . սոցա ամեն մէկն ծնանելէ մէկ քանի օր վերջ կ'սկսին ածել եւ այսպէս շարունակաբար 7-8 անգամ մէկ տարւոյ շրջանին մէջ . ըստ մի քանի միջատաբաններու հաշւոյն, միլիոններու կը հասնի մէկ տարուան մէջ . ձմեռն մայրերը կը մեռնին, թրթուրները թմրելով ձմեռն կ'անցունեն, գարնան սկիզբն կը կատարելագործունին եւ կ'սկսին ածել եւ այսպէս շարունակաբար :

Այս էգերէն արտադրեալ հարսնեակներու մէկ մասն հողէն դուրս ելնելով կը թեւաւորին . այս վիճակին մէջ է որ հողմն կըրնայ դայնս հեռուններն տեղափոխել եւ անդ միեւնոյն հիւանդութեան վարակումն պատճառել : Այս թեւաւոր էգեր առանց արգասաւորութեան փոքր քանակութեամբ ձուեր կ'ածեն, զորս կը զետեղեն տերեւոց պտուկներու եւ այլ երիտասարդ մասանց վրայ :

Այս ձուերու խոշորներն էգեր, իսկ փոքրիկներն արուներ կը ծնին առանց թեւի, որք զուգաւորելով ձուեր կ'արտադրեն զորս բունի կեղեւի մէջ կը զետեղեն . այս 3-րային անուանեալ ձուերն՝ գարնան բացուելով առանց թեւի էգեր կուտան, որոց մի մասն հողին մէջ մտնելով արմատոց վրայ կը բնակին, իսկ միւս մասն տերեւոց վրայ ուր դոսեր (galle) կը կազմեն եւ այսպէս շարունակաբար : Ամերիկայի մէջ աւելի տերեւոց վրայ կը բնակին, իսկ Ներոպայի մէջ ընդհանրապէս արմատոց եւ բուններու :

Ձմեռնային ձու մը մինչեւ 500,000 անհատ կ'արտադրէ մէկ տարւոյ շրջանին մէջ (°) ըստ ոմանց :

Ինչպէս կը տեսնենք հոս ձմեռային ձուն է որ կը նորոգէ եւ կը կազմէ Թիւրքսէրայի բազմութիւնն՝ առանց որոյ ամեն էգերու թիւն երթալով պիտի նուազի եւ օր մը պիտի անհետանար եթէ երբեք ձմեռային ձուն անհետացունէինք :

Պարսկան . — Թիւրքսէրան Ամերիկայի մէջ սկիզբն առած է ուր մասնաւոր դաւառներ եւ մանաւանդ Քօլորատոյի այգիներն ջնջելէ վերջ անցած է յԱնգլիա եւ ի Ֆրանսա :

1863 ին առաջին անգամ տեսնուեցաւ Ռօտ գետի եզերաց վրայ, 1866 ին Պօրտոյի չրջակայներն, 1868 ին Մօնթէլիէ հասաւ,

ուր Փլանչօն առաջին քննութիւնը կատարեց եւ վերջապէս տարածուեցաւ եւ այսօր Ֆրանսայի այգեաց 2/3 մասին տիրած է եւ կ'սպառնայ գրեթէ մնացեալն ալ յիճացունել :

Միջոցներ . — Մինչեւ ցարդ դիտնոց եւ փորձառուաց առաջարկած գլխաւոր միջոցներն հետեւեալներն են որոց մի մասն գրեթէ կիսով չափ կը յաջողի եւ այն ալ բացառիկ պարագայներու մէջ :

1⁰. Փորձեցին կալնելով Լ իւններով ըսպաննել, բայց պէտք չէ մոռնալ թէ այն կենդանիներն օրերով կրնան պոտաւի նման սաստիկ կալիով խառն ջուրի մէջ ապրիլ առանց սպաննուելու . ուստի փորձերն ի դերեւ ելան :

2⁰. Մթթային բնածախ (sulfate de carbon) եւ ծծմբածխային պօթս (sulfo-carbonate de potassium) քիչ քանակութեամբ չեն կարող ազդել, մեծ քանակութեամբ սուղ են եւ արմատներու ալ կրնան մնասել :

3⁰. Ողղէ՞ն փորձեցին, յաջողեցաւ, բայց առ նուազն 40 օր ջուրն կենալու է որպէս զի շնչասպառ մեռնին . ողողումն բացառիկ պարագայներու մէջ միայն կարելի է :

4⁰. Աւաղուտ հողերու վրայ այգիներն տնկելով կամ հողերն աւաղելով առաջին կ'առնուի, բայց սա գործնական չէ ամենուրեք, մեծ ծախուց կը կարօտի եւ չի գիտենք թէ Թիւրքսէրան երբեք չի՞ պիտի կըրնայ համարձակիլ աւաղի մէջ բնակելու :

5⁰. Ամերիկայի մայրէր քիւլէ — Թէպէտ միջատն առ այժմ Ներոպիոյ մէջ տնկուած Ամերիկայի մայրերու կը խնայէ, բայց չի գիտենք թէ մինչ ց'երբ պիտի թոյլատրէ ըստ Էմիլ-Պլանչաոի երեւելի կենդանաբանին եւ մասնագէտ միջատաբանին : Թիւրքսէրայի ծրնունդն Ամերիկայի մայրերէն ըլլալով՝ այս թշնամւոյն Ներոպիոյ մէջ տարածումն նոցա այդ երկրի մէջ մտնելէն առաջ եկած է . բազմութիւն օրինակներով եւ պատմական փաստերով կ'ապացուցանէ թէ ամեն ուրեք ուր որ Ամերիկայի մայրեր մուտ գտած են, այդ անողոր թշնամին սկսած է անդ ճարակիլ . ուրեմն, կ'ըսէ, ամերիկեան մայրերու գլխուն մեր թշնամւոյն գիրկը նետուիլ կը նշանակէ :

Բայց ինչո՞ւ մի քանիներէ հետէ Գոանսայի մէջ տնկուած ամերիկեան մայրերն

զերծ են Թիլօքսէրայէն . զի որպէս կը հաստատէ Մօնթէլիէի դասատուներէն մին , եւ Փարիզու ծառաբանութեան եւ այգեբանութեան վարժարանի դասախօս Մ. Նանօ , ամերիկեան մայրերն աւելի կարծր են եւ երկար ժամանակ կրնան մրցիլ Թիլօքսէրայի դէմ , բայց օր մը ուշ կամ կանուխ , անշուշտ Թինամուոյն շարունակական հարուածները պիտի ստիպեն զինքն պարտութիւն խոստովանիլ . կը բաժնեմ այս կարծիքն եւ կը պնդեմ :

60. Ճնշում — Ամեն միջատաբաններ Թինամի միջատանց ջնշման համար ճնշումն կը քարոզեն , նա մանաւանդ Էմիլ — Պլանշաու որ մեծ կարեւորութիւն կուտայ : Ճնշումն ծանր լողերով պէտք է կատարել հողերու վրայ . չը գիտեմ թէ մինչեւ ո՞ր աստիճան ազդեցութիւն ունի Թիլօքսէրային վրայ , խոստովանելով միանգամայն որ հզօր միջոց մ'է ուրիշ միջատաց համար :

70. Աչքէլ — Փորձեցին նոյն իսկ աղբէլ Թիլօքսէրայէ բռնուած այգիներն , սակայն փորձերն ապացուցին թէ որ եւ է ազդեցութիւն չի կրնար ունենալ այդ միջատաց կենաց նկատմամբ :

80. Սեռայէն չոտէն ջնջել — Աւստիկ այս էր Էմիլ — Պլանշաուի առաջին անգամ առաջարկած միջոցն որ , ինչպէս մենք ալ տեսանք , ծագումն կ'առնուէ կենդանաբանական օրէնքէն թէ այդ ձուերու ջնջումն կրնայ զայնս խաղառ անհետացնել : Այս իմաստունին առաջարկն անլսելի եղաւ եւ շատ մը կենդանաբաններ նոյն իսկ ծիծաղեցան , բայց 12 տարիներ ամեն միջոցներու դիմելէ , ամեն կարգի ֆիզիքական , քիմիական , մեքենական եւ կենդանաբանական միջոցներ ի գործ դնելէ վերջ , յուսահատած այսօր կ'ըսէին պատուել այն սկզբնական առաջարկն զոր երբեմն արհամարանօք մերժեցին : — Արդէն ամեն մեծ գիտնոց սկզբնական գաղափարներն մի եւ նոյն բաղդին արժանացած են . կարծես բնութեան մի օրէնքն է խաչուիլ քաւելու համար , դափնեայ պսակէ առաջ փշակաղմն կրել , եւ յարգուելէ առաջ նախատուիլ եւ անպատուիլ :

— Տաճկաստանի Երկրագործական Տեսչութիւնն անդարբեր չի մնաց . գրեթէ անմիջապէս երեք անձերէ յանձնախօսմբ մը

կազմեց այս նոր Թինամուոյն առաջին անելու համար , որոց մին Փարիզու երկրագործական համալսարանի քարտուղարն է , Մ. Շէնէլ , երկրորդն Կոխյօնի նախկին աշակերտ եւ Ադրիանուպօլսոյ գաւառին երկրագործական քննիչ եւ այդ քաղաքի վարժարանին տեսուչ Ճէմալ պէյ , իսկ երրորդն Մօնթէլիէի վարժարանի չրջանաւարտներէն Անդրէասեան Նշան էֆէնտի . յաջողութիւն կը մտղթեմ իմ այս երեք արհեստակից բարեկամաց , խնդրելով որ յիշեն իմ ծեր միջատաբան դասատուն եւ իւր գաղափարն :

Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Քարոզ զբնութեան Տոմ. Թաւշեհ
Տայիսէ 3ին , Կերպէ առաջ :

« Զամենայն զոր ինչ կամիցիք
Թէ արացեն ձեզ մարդիկ , արասեք
եւ դուք նոցա այնպէս » :
(Մատթ . Է . 42) :

Նիւ - ԵՈՐՔ , Յունիս 6 , 1885

Մեծագոյն պատերազմն զոր երբեք տեսած է աշխարհ , է պատերազմն Ղրաւմագլսոյ եւ Աշխատութեան մէջտեղ : Կուրք չէ նման այնմ որ պատմութեան մէջ կը կոչուի « Պատերազմ Երեսնից Ամաց » . վասն զի սա է պատերազմ դարուց , պատերազմ հինգ մասանց աշխարհի , պատերազմ շրս կիսագնաց : Այս երկրին մէջ միջին դասերն , որոց վրայ կը վտահէր ազգն իշխանութեան կշիռն ի ձեռին ունելու եւ իբրեւ միջնորդ գործելու երկու ծայրերու մէջտեղ , նուազելու վրայ են . եւ եթէ իրեն յառաջ երթան նոյն համեմատութեամբ որով կ'երթային մինչեւ ցարդ , ոչ շատ ժամանակ ետքն այլ եւս միջին դաս պիտի չը մնայ այս երկրին մէջ , այլ ամենեքին պիտի ըլլան կա'մ շատ հարուստ կա'մ շատ աղքատ , իշխաններ կամ տնանիւներ , եւ երկիրը պիտի ծածկուի պալատներով կամ խրճիթներով : Ընդդէմաբար զբնութեան հետզհետէ աւելի կը մօտենան իրարու : Հեռագրատանց

մէջ աշխատողներու գործադուլերը, երկաթուղեաց գործակալներու գործադուլերը, Բէնսիւրիւմիոյ հանքաց մէջ աշխատողներու գործադուլերը, ուժանակի աշակերտաց շարժումները, սոքա ամենեքին յառաջամարտիկ կռիւներ են ընդհանուր ճակատամարտէ մ'առաջ, կամ եթէ կ'ընտրէք, սոքա ամենեքին են ծխաններ կամ բերաններ ուստի դուրս կ'ենէն շողին բանտարկեալ զօրութեան մը որ կը սպառնայ օդը հանել ընկերութիւնը: Կրնաք ըսել թէ այս դժգոհութիւնն եւ անհանգստութիւնն բարկացեալ մանկիկի մը պէս վերջապէս լալով պիտի ննջէ. կրնաք փոքրցունել զայն կոշեւով Ծուրիէրականութիւն կամ Ընկերականութիւն, կամ Սէն Սիմոնականութիւն, կամ Ոչնչականութիւն, կամ Հասարակականութիւն. բայց այս չարգիւր որ եղելութիւնն ըլլայ այս դարուս ամենէն զօրաւոր, ամենէն մթթագին եւ ամենէն ահաւոր սպառնալիքը: Շփոթութիւնը խաղաղեցնելու բոլոր փորձերը մինչեւ ցարդ ապարդիւն եղած են, եւ մենավաճառութիւնն աւելի խստապահանջ եւ խրոխտ է, եւ արուեստաւորաց միութիւններ աւելի դառնացեալ: «Աւելի թոշակ տուէք մեզ», կը գոչեն գործաւորք: «Նուազ թոշակ պիտի ընդունիք», կ'ըսեն դրամատեարք: «Մեր աշխատութեան ժամերը կարճեցէք», կ'աղաղակեն գործաւորք: «Աւելի երկար ժամեր պիտի աշխատիք», կը պատասխանեն գործի տէրերը: «Ապա ուրեմն, եթէ այս ինչ պայմանները չընդունիք, բնաւ պիտի չը գործենք», կ'ըսեն սոքա: «Եթէ այդպէս է, անօթի մեռէք», կ'ըսեն նոքա: Եւ գործաւորք տակաւ առ տակաւ կ'ուտեն կ'սպառեն ինչ որ աւելցուցած էին լաւագոյն ժամանակներու մէջ. եւ եթէ հիմնական փոփոխութիւն մը չըլլայ, ոչ յետ բազմաց այս երկրին մէջ պիտի ունենանք երեք միլիոն քաղցեալ մարդեր եւ կիներ: Արդ, երեւի ձեռք առնել խաղաղութեան հանգարտ չը սպահուիր: Օրէնսդիր մարմիններու բոլոր աշխատութիւններն, քաղաքաց բոլոր ոստիկաններն եւ Միացեալ Նահանգաց ցամաքային եւ ծովային զօրութիւնները չեն կրնար հանգարտ պահել երեք միլիոն անօթի ժողովուրդ: Ապա ուրեմն ի՞նչ: Միթէ Դրամագլխոյ եւ Աշխատութեան մէջտեղ այս պա-

տերազմը պիտի վերջանայ մարդկային իմաստութեամբ: Ոչ երբէք: Միոյն ճակատն աւելի կը կնճռի, եւ միւսոյն բուռն աւելի կը սեղմանայ:

Բայց ինչ որ մարդկային իմաստութեամբ չկատարուիր՝ պիտի կատարուի Քրիստոնէութեամբ, եթէ աւելի ընդհանուր տարածուի անոր բարերար ազդեցութիւնը: Լըսած էք այնպիսի զօրաւոր դեղերու վրայ՝ որոց մէկ կաթիլը հիւանդութիւնը կը կասեցունէ եւ հիւանդը կ'ապաքինէ. եւ ես պիտի ըսեմ ձեզ թէ մի կաթիլն իմ բնագրանիս եթէ աղէկ մատակարարուի, պիտի դադրեցունէ ընկերութեան բոլոր այս վայերն եւ ցաւերն, եւ կատարեալ առողջութիւն պիտի տայ բոլոր դասերու: «Զամենայն զոր ինչ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արարէք եւ դուք նոցա»:

Այս առաւօտ պիտի ըսեմ ձեզ նախ թէ ի՞նչպէս չկասեցուիր այս կռիւն ի մէջ մենավաճառութեան եւ ծանր աշխատութեան, եւ ապա պիտի ցուցնեմ ձեզ թէ այս վէճն ի՞նչպէս կրնայ կարգադրուիլ:

ԱՆՕԳՈՒՏ ԴԱՐՄԱՆՆԵՐ

Նախ եւ առաջ այս շփոթութիւնը չկըրնար խաղաղիլ բողոքելով հարուստ մարդոց թէ անոր համար միայն որ հարուստ են: Աշխարհի վրայ չկայ արուեստաւորաց միութեան անդամ մը որ չուզէ հարուստ ըլլալ եթէ կրնայ: Նրբեմն բարեբախտ գիւտով մը կամ յաջող դիպուածով, մարդ մը, որ բան մը չունէր, կ'ըլլայ մեծ ստացուածոց տէր, եւ մեք կը տեսնենք զնա խրոխտ եւ հպարտ, եւ կը բռնէ ուրիշներուն կողորդէն ձիւղ այնպէս ինչպէս այդ կը բռնէին իւր կողորդէն: Մարդկային բնութեան մէջ կայ նուաստ բան մը. Նրբ մարդ գլուխը կամ կատարը կ'ենէն: Սակայն մեղք չէ հարուստ ըլլալ ինչպէս մեղք չէ աղքատ ըլլալ: Կան մարդիկ որ մեծ հարստութեան տէր եղած են խարդախութեամբ, եւ կան միլիոնատէրեր եւս որ իրենց հարստութիւնը դիզած են կանխատեսելով չուկայի՝ գիւներուն փոփոխութիւնները, առեւտրական փայլուն յաջողակութեամբ, եւ անոնց հարստութեան իւրաքանչիւր թալէրն է այնչափ պարկեշտութեամբ ստացուած որչափ այն թալէրն զոր . . . որմնադիր մը կ'ստա-

նայ որմ շինելով: Կան մարդիկ որք աղքատ մնացած են իրենց իսկ յանցանք: Շատեր կրնային բարեկեցիկ վիճակ ունենալ, բայց իրենց չափը ծխեցին կամ ծամեցին (Սմերիկացիք ծխախոտ ծամելու գէշ սովորութիւնն ալ ունին), կամ իրենց չափէն աւելի ծախք ըրին, մինչ այլք նոյն չաքաթական կամ ամսական թոշակով ունեցան բաւական կարող վիճակ:

• • • Միգօպէր ըսաւ Դաւիթ Գորէրֆիլտի. «Գորէրֆիլտ, զաւակս, մէկ լիրա եկամուտ, ծախք տասն եւ ինն շիլլինկ եւ վեց բէնս, հետեւանք երջանկութիւն»: Եւ կան մեծ բազմութիւնք մարդոց, որ աղքատ կը մնան, վասն զի զոհ են իրենց անհեռատեսութեան: Մեղք չէ հարուստ ըլլալ, ինչպէս մեղք չէ աղքատ ըլլալ: Կը բողբեմ այն գանգատանաց ձայնին դէմ զոր կը լսեմ ընդդէմ անոնց, որ խնայողութեամբ, անձնուրացութեամբ եւ յարատեւ աշխատութեամբ եղած են մեծ ստացուածոց տէր: Առեւտրական յաջողութեան այս ումբակոծութիւնն երբէք պիտի չկասեցունէ այս կռիւն ի մէջ Դրամագլխոյ եւ Աշխատութեան:

Վէճն եւ կռիւը չկարգադրուիր եւ չի հանդարտիր նաեւ արհամարհանօք եւ անխաբիշ ցոյնեմք փորձելով աշխատանքաց դասերուն հետ: Կան մարդիկ որ կը խօսին գործաւորաց վրայ այնպէս որպէս թէ նոքա ըլլային արջառոց ջոկեր կամ գրաստի անասուններ: Անոնց ջիղերն են ոչինչ, անոնց տնային հանգիստն է ոչինչ, անոնց երջանկութիւնն է ոչինչ: Անոնք որ այսպէս կը խորհին, չունին գործաւորաց վրայ աւելի կարեկցութիւն քան զոր որսական բաւական ունի առ նապաստակն, կամ բազէն առ հաւն, եւ կամ վագրն առ կոյն: Երբ ժան Վալթան, Վիլքթոր Հիւկոյի գերուածոց մեծագոյնի գիւցազնը, նեղութեան եւ արիական համբերատարութեան կեանքէ մ'եաքը կը մատնուի ի բանտ եւ ի մահ, գիրքը կը փակեն և կողին զարնելով կը գոչեն. «Արժանի էր»: Զայրացմամբ գետին կը վարնեն իրենց ոտներն, եւ կըսեն ճիշդ հակառակին սա խօսքին «Փրկեցէք գործաւոր դասերը»: Անոնց համակրութիւնն է Շայլոքի հետ, եւ ոչ Անդոնիցի եւ Բորձիայի հետ: Անոնք Բիւրդոգրատներ, եւ

անոնց զգացումները դժոխային են. . . : Կասեցնելու համար այս ահաւոր կռիւն ի մէջ Դրամագլխոյ եւ Աշխատութեան, չեն ուղեր իրենց ճկոյթ մատին ծայրն անդամ վերցունել:

Այս վայրագին վէճը չխաղաղիր նաեւ Բոնա-Մեմֆ: Աստուած երբէք չօրհնեց ըսպանութիւնն: Վաղիւ օղը հանեցէք. . . Նիւ Եորքի, Պրուքլինի եւ Պոսդոնի գեղեցկագոյն շէնքերը, եւ բոլոր աղիւսները, գերանները եւ քարերը պիտի խնան ամերիկեան աշխատութեան բաց գլխոյն վրայ: Միացեալ Նահանգաց մէջ գործաւորաց դասերուն ամենէն ոխերիմ թշնամիներն են անոնց խելայեղ ընկերներն եւ կարծեցեալ բարեկամները: Սպանութիւնն, Իրլանտայի զրկանաց վրէժը լուծելու համար Իրլանտայի Տըպլին քաղաքը, Ֆէնիքս Բարք կոչուած հասարակաց պարտիզին մէջ Լորտ Ֆրէտէրիք Գամբլէտի եւ Մր. Պուրբի սպանութիւնը, վշտաշարժար ժողովուրդէն հեռացուց միլիոնաւոր համակիրներու սիրտերը: Լոնտոնի մէջ Հասարակաց Խորհրդարանն օղը հանելու համար մօտերս գործուած դաւը նոյն արգիւնքն ունեցաւ. գործէ վըրկեց բիւրաւոր անմեղ Իրլանտացիներ Անդոնի միջ:

(Քարոզիչն Ամերիկայի մէջ գործուած քանի մը դաւերու եւ գործադուլերու ցաւալի հետեւանքը յիշէ ետքը կը շարունակէ այսպէս). Բարբարոսութիւնն երբէք պիտի չբուժէ քաղաքակրթութեան սխալները Նշանակեցէք զայս:

Մեծն Ֆրէտէրիք հաւնեցաւ իւր Բոդստամի պալատին մօտ գետինի մը և միտքը դրաւ ստանալ զայն: Գետինն էր Զաղացպանի մը: Թագաւորը գետնին գնոյն եռապատիկը տալ ուղեց, բայց Զաղացպանը չէր ուղեր ընդունիլ վասն զի այն տեղն էր իւր տունն, եւ տանն համար սյնպէս կ'զգար ինչպէս Նաբատ զգաց երբ Ագապ կ'ուզէր առնուլ անոր այգին: Մեծն Ֆրէտէրիք էր խիստ եւ ահաւոր մարդ, եւ հրաման ըրաւ իւր առջեւ բերել Զաղացպանը. եւ ունելով ի ձեռին գաւազան, — գաւազան որով երբեմն կը զարնէր իւր պաշտօնակալաց, ըսաւ Զաղացպանին. «Արդ, քեզ գետնիդ գնոյն եռապատիկը տալ առաջարկեցի, եւ դու դեռ չես ուղեր վաճառել զայն, ես պիտի առ-

նույն գետինը կամայ ակամայ» : Զաղացապանը պատասխանեց . «Վեհափառ Տէր, պիտի չառնուս» : «Այո», ըսաւ թագաւորը, «պիտի առնուի զայն» : «Ան տոհմ», յարեց Զաղացապանը, «եթէ Վեհափառութիւնդ առնու գետինս, ձեզի դէմ դատ կը բանամ Սրբարութեան տոհմին առջեւ» : Այս սպառնալեաց վրայ թագաւորը թողուց իւր ամբարիշտ պահանջը : Եւ ամենէն ծանր զրկանքն ընդդէմ աղքատաց եւ ընդդէմ գործաւորաց դասերուն դեռ պիտի դուրս օրինաց առնէ : Բռնութիւն եւ ընդդէմ օրինաց գործ բնաւ բան մը չկատարեր, բայց արդարութիւն եւ ըստ օրինաց գործ պիտի կատարէ զայն :

ՀԱՄԱՅՆԱՔՈՅԺ ԴԵՂ

Եթէ այս վէճն ի մէջ Դրամագլխոյ եւ Աշխատութեան չի կրնար վերջանալ մարդկային իմաստութեամբ, եթէ այսօր Դրամագլխոյ եւ Աշխատութիւն իրենց բոլոր մատերը դրած են մէկմէկու կոկորդին, ինչպէս են արդարեւ, ժամ է մեզ համար նախել այլուր դարման գտնելու, և այս դարմանն կը լիթի կ'ենէ բնաբանէս վարդագոյն եւ ծիծաղադէմ, եւ կը գնէ մէկ ձեռքն Դրամագլխոյ աստածածկոյթ ուսին վրայ, եւ կ'ըսէ ձայնով մը որ վեհ եւ փառաւոր կերպով պիտի լուծէ այս վէճն, եւ պիտի լուծէ ամէն բան . «Զամենայն դոր ինչ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ, արարէք եւ դուք նոցա այնպէս» : Այսինքն տանտիկինը պիտի ըսէ . «Պիտի վարուիմ խոհատան կնոջ հետ ճիշդ այնպէս ինչպէս կ'ուղէի որ վարուէին ինձ հետ, եթէ ես գտնուէի վարը խոհատան մէջ, եւ իմ գործս ըլլար լաթ լուալ, կերակուր եփել եւ տուն աւել, եւ վարի կնկան պարտականութիւնն ըլլար բազմիւ այս սենեակն եւ ըլլալ տան տիրուհի» : Խոհատան կինն ալ ըսելու է . «Եթէ տանտիկինս ինչ աւելի յաջող եւ բարգաւաճ կ'երեւի, այդ չէ յանցանք անոր . ես տիկնոջս հետ վարուելու չեմ իբրեւ թշնամի : Նոյնչափ հաւատարիմ եւ աշխատասէր պիտի ըլլամ վարը, որչափ պիտի պահանջէի հաւատարմութիւն եւ աշխատասիրութիւն իմ սպասաւորներէս եւ սպասուհիներէս, եթէ ըլլայի մետաքսեղէն ապրանց վաճառականի մը կ'ինը» :

Երկաթի գործարանի մը տէրը առաւօտուն տունէն մեկնելէն առաջ բնաբանէս Կաթնաւորով պիտի երթայ իւր ձուլարանը, եւ հոն կրակարանին առջեւ մարդ մը մինչեւ մէջը մերկ, քրտնաթաթաւ և խոնքեալ պարտասեալ, եւ պիտի ըսէ անոր . «Հոս չատ տաք կ'երեւի : Դուն չատ յողնած եւ հիւծած կ'երեւիս : Լսեցի թէ արդար վարդախտէ բռնուած է : Եթէ կ'ուզես այս շաբաթ թոշակդ քիչ մը կանուխ առնուլ հիւանդապահին տալու եւ դեղ դրնելու համար, եկ գրասենեակս երբ որ կ'ուզես» :

Ժամանակ մ'ետքը շուկայի առեւտուրը կը դադրի, այն երկաթի գործարանին արտադրութիւնը այլ եւս չատ չեն պահանջուիր, եւ գործարանին տէրը չգիտեր ինչ ընէ : Կ'ըսէ ինքնին . «Փակեմ գործարանս, թէ կ'ստով չափ միայն բանեցունեմ, եւ գործաւորներուս շաբաթականները զեղչեմ» : Բոլոր օրն իւր սենեակին մէջ վեր վար կը պտըտի առանց գիտնալու թէ ինչ պիտի ընէ : Երեկոյեան դէմ գործաւորները մէկտեղ կը կոչէ : Անոնք ամէնքը կը կենան գործարանին տիրոջ շուրջը, որ կ'ըսէ անոնց . «Ժամանակները չատ գէշ են, այժմ չեմ շահիր ըսան թաւեր ուր յառաջագոյն կը շահէի հարիւր թաւեր : Ձեմ գիտեր ինչ է պատճառը, հիմա մեր գործարանին արտադրութիւնները չատ չեն պահանջուիր : Կը տեսնէք թէ ես մեծ ծախքի տէր եմ . ձեզ հոս կանչեցի հարցնելու թէ ինչ խորհուրդ կուտաք ինձ : Ձեմ ուզեր գործարանը փակել, վասն զի եթէ այնպէս ընեմ, դուք առանց գործի պիտի մնաք, եւ դուք չատ հաւատարիմ եղած էք, և ես ձենէ գոհ եմ, եւ կը թուի թէ դուք ալ ինչ գոհ էք . ձեր զաւակները խնամոց կարօտ են, եւ քիչ ատեն ետքը ձեր կ'իները նոր զգեստի պէտք պիտի ունենան : Ձեմ գիտեր ինչ ընել» :

Վայրկեան մը կամ երկու խոր լռութիւն կը տիրէ . եւ ահա մին ի գործաւորաց իւր ընկերներուն կարողէն դուրս ելնելով կուգայ յառաջ եւ կ'ըսէ . «Տէր, դուք միշտ բարի եղած էք առ մեզ . երբ դուք յաջող էիք, մեք եւս յաջող էինք . եւ հիմա դուք նեղ վիճակի մէջ էք, եւ կը ցաւիմ որ այսպէս եղած է, եւ մեք ամէնքս համակիր ենք ձեզ : Ձեմ գիտեր միւս ընկերներս ինչ կը զգան,

բայց ես կ'առաջարկեմ որ մեր թոշակէն քսան առ հարիւր զեղջ ընէք այժմ, եւ երբ աղէկ ժամանակներ գան, դուք ալ յիշէք զմեզ եւ բարձրացնէք մեր թոշակները : Գործաւորը շուրջը իւր ընկերներուն կը նայի, եւ կ'ըսէ. « Տղայք, դուք ի՞նչ կ'ըսէք ասոր. անոնք որ կը հաւնին առաջարկութեանս թող ըսեն Այո՛ : « Այո՛, այո, ա-յո », կը գոչեն երկու հարիւր ձայներ :

Գործարանին տէրը կը հիւանդանայ եւ կը մեռնի : Յուլարկաւորութեան հանդիսին ներկայ են բոլոր գործաւորք, որոց այտե-րէն վար կը հոսին արտասուածաց կաթիլներ : Բայց յուլարկաւորաց թափորը գերեզման հասնելէ ժամ մ'առաջ այս գործաւորաց կիներն եւ զաւակներն արդէն գերեզմանա-տունն են : Դագաղը ննջեցելոյն տունէն մեկնելէ առաջ կրօնի պաշտօնեայն կրնայ լաւ դամբանական մը խօսած ըլլալ. բայց ամենէն վաւեր խօսքերը կը լսուին այն օրը գործաւորներէն որ կը կենան գերեզմանին շուրջը :

Գիշերը գործաւորաց բոլոր հիւղակներ-րուն մէջ ո՛ր կ'ըլլան ընտանեկան աղօթքի ժողովներ, կը յիշուին ապարանքը բնակող այրին եւ որբերը : Գերեզմանատան երկաթ-եայ վանդակին վրայէն խոթող հայեացք չեն նետուիր, այլ տեսարանին վրայ կը սա-ւառնին Աստուծոյ և մարդկան օրհնութիւնն որ կուգայ Գրիստոսեան պատուէրին կա-տարումէն. « Զամենայն զոր ինչ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ, արարէք եւ դուք նոցա այնպէս » :

« Ոհ », կ'ըսէ հոս մէկը, « այդ ամէնն է է Իւզօբի, երեւակայական, այդ ամենն անկարելի է » : Ոչ : Նրէկ թերթէ մը կտրեցի սա հատուածը. « Ամենէն հաճելի դէպքե-րէն մին է ո՞ր որ կը գրուի Անգլիոյ Շէֆիլտ քաղաքէն : Շէֆիլտի երկաթի գործարաննե-րուն մէջ աշխատող մարդոց թոշակները կը կարգադրուին իրաւարարութեան ժողովոյ մը միջոցաւ, որոյ որոշումները կը յարգեն թէ՛ գործաւորք և թէ՛ գործարանաց տեսար-ժամանակէ մ'ը վեր կրկաթի եւ պողպատի առեւտուրը չ'ո՞ր ինկած է, եւ գործարա-նաց տեսար չ'ո՞ր կրնար, առանց մեծ կո-րըստեան, հատուցանել իրաւարարութեան ժողովէն որոշուած թոշակը, եւ ո՛չ գործի տէրերն եւ ո՛չ գործաւորք իրաւունք ունին

փոխելու ժողովոյ որոշումը : Այս դժուա-րութեան առջեւն առնելու համար Շէֆիլտի մէջ պողպատի ամենէն մեծ գործարաննե-րէն մէկուն գործաւորք ունեցան խորհուրդ մը որ որչափ հաղուադէպ նոյնչափ վեհանձ-նական է : Սորա առաջարկեցին աշխատիլ իրենց տէրերուն համար շարաթ մ'առանց որ եւ իցէ վարձու : Որչափ աղէկ է այս մի-ջոցն քան գործաւորքը : Բայց եկէք ինձ հետ ոչ այնչափ հեռի որչափ հեռի է Շէֆիլտ յԱնգլիա, եկէք ինձ հետ, եւ ես պիտի ցուցնեմ ձեզ գործարաններ, դրամատուներ եւ վաճառատուներ յորս կը պահուի բնա-բանիս քրիստոսական պատուէրն. հոն դո-րծի տէրն անարդարութիւն չըներ գործա-ւորին, եւ ոչ գործաւորը դաւ կը գործէ գործի տիրոջ դէմ, ինչպէս մարդուս աջ ձեռքն եւ ձախ ձեռքն, աջ աչքն եւ ձախ աչքն, աջ ականջն եւ ձախ ականջն իրարու հակառակ չեն գործեր : Արդ, ո՛ր սկսելու է այս : Մեր տուններուն մէջ, մեր խանութ-ներուն մէջ, մեր ագարակներուն մէջ, ա-ռանց սպասելու որ այլ կատարեն իրենց պարտականութիւնը : Կայ անհամաձայնու-թիւն տան վերի փառաւոր սենեկին եւ խոհատան մէջ : Ուրեմն սխալմունք մը կայ կա՛մ վերի սենեկին, կա՛մ խոհատան մէջ եւ կա՛մ երկուքին մէջ : Զեր խանութներուն մէջ գրադիրք ցատուցեալ են առեւտրական տան դէմ : Կայ սխալմունք կա՛մ մէկուն կա՛մ միւ-սին, եւ կա՛մ երկուքին քով :

ԵԱՆՔԻՆ

(Մնացեալն յաջորդ թիւով)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԴԺՆԴԱ՛Կ ՄԱՅԻՍ

Եւ դու, ո՛վ գըթած յայիս, որ տիրատես խ-պանին

Եւ ասեղ խուժ անտառաց համար. ծաղիկ մի ունիս, Դու կը խլե՛ս և խամրելով եղծանես դու, ո՛վ մայիս, Ըզճաղիկըն գեղուղէշ բարեւոհճիկ տանըս այս :

Իւր բունէն հրաժեշտ առնու արագաթռիչ, ո՛հ եղուկ,

Հողին դեռարողքը, և իբրեւ նոր իմն հաւիկ, Սաւառնի փոքր ծղկեօքն դէպ ի յափն անծանօթ՝ Զոր թերեւս գեղաշուք քան ըղծնդեհանն երազէ :

Բայց նրմա չըկայ այլ եւս, ինչպէս Թրուշուհն զտունայ,
Դառնալ միւսանգամ անդր ի սենեակն՝ ուր ծընաւ,
Ի սենեակն՝ որ պըճնազարդ է տակաւին վայրապար
Մանկական խաղալիքը՝ որովք երբեմն ըզբօսաւ:

Բայց չըկայ նրմա դառնալ, Թէպէտ լինի խելա-
մուտ
Որ այն տեղն լաւագոյն չէ քան ըզվայր ծըննդեանն,
Որ ի գուր է գրչիովին Թէ և յերկնից իսկ անգամ
Խընդրէ նա մօր և հօր ծնողաց ըզսերն անուշակ:

Եւ այս սերն որ չունի հանգիտակշիւ, արդ-
այժմիկ
Պաշտելի մանկան համար եղած է սին և անպէտ,
Եւ խոկայ չարաշուէր ակտին վերայ, և նորուն՝
Քրտմանափուշ սարստփմամբ՝ յետին շընչոյ վախճանին:

Եւ ընդ վայր ըզնա կոչէ, խարխափելով վայրապար
Բազուկները կարկառէ առնա բըռնել զինք՝ ձեռամբ.
Տարադէմ տարաքնակ հոգեակն ել և գընաց,
Եւ տեղն յոյժ անծանօթ է, ուր փընտուել մարթ է
ըզնա:

Լոկ ծանօթ է այն տեղին, ուր հանգուցեալ կայ
սպիտակ
Նաղելի մարմինն՝ աղօտ մըթին մահուան արհաւրօք
Պարուրեալ լուռ անմըռունչ, և գըրկախառն սեղ-
մամբ
Կը ծընչէ զինքը կըծեայ վէմ կարծրատորրը և ցուրտ:

Ոչ եւս այլ անդանօր գայ իջնէ հօրն գըգուանք
Սիրամուռնդ մանկան վերայ, և շուրջ բոլոր դիշեր է,
Եւ ոչ մայրն իսկ անդ ուրեմն ակընկալեալ կը սպասէ
Որ զարթնու նա ի քունէն, որպէս երբեմն յորրանին:

Վարդագոյն նընէր յայնժամ, յայնժամ մաքուր
և քընքուշ
Կ'եղէր շունչն իւր շուրթներէն, ինչպէս անոյշ բոյր
հոտոյ
Կ'եղէ ի պըտակաց չըքնաղագեղ գիրգ ծաղկանց՝
Ջոր մայրս կը բանայ և գունագոյն գեղերփնէ:

Այլ դըմեայ մայրս, որ գկեանքն ծաւալես ուղ-
թօրէն
Լայնատարր երկրի վերայ, և այս որմնց մէջ դընես
Ըզմահն՝ որ ըզհոգին կ'ահաբեկէ յուսահատ,
Ըզմահն՝ ամբարիշտ որ գողանայ զմեր որդիքն:

Ո'վ մայրս դըժընդակ, որ գիտես բիւր բերկրու-
թիւն,
Որ ամեն սրտի համար գիտես հազար զուարճալիք,
Եւ այս, ո'չ եղունկ, երկու աղըւռական լանջաց մէջ
Կը ծնանին ահեղագոյնն ի կրակըծանրս ցաւոց:

ՊԵՂԵԼՈՆԻ

Թարգմ. ԱՐՍՈՒԿԵՍ

ՆՈՐԱՎԵՊ

ՊԼԱՆԵԿԸ

Սանդուղին վրայ արագ եւ շառաչուն
քալուածք մը, եւ ահա ննջասենեակի մը
դուռը կը բացուի գըրդիւնով:

— Մա'թիլտ, կ'ըսէ խստութեամբ առ-
նական ձայն մը:

— Դո՛ւն ես: Որքան վախցուցիր զիս:

Այս ձայնարկութիւն կը յաջորդէ սոսկ-
ման ճիչի մը, եւ մանկամարդ կին մը, որ
հայելիի մ'առջեւ մագերը կը յարդարէր,
իւր ամուսնոյն կը դառնայ՝ խանդաղատ
ժպիտ մը ի շրթունս: Այլ յապուշ կը կրթի
իւր առջեւ տեսնելով զայն, յոտին, յօնքերը
պոստած, աչերը մոլորուն:

— Ի՞նչ կայ, Ժիւլ, կը դոչէ անհանգիստ
ձայնիւ:

— Նրէկ իմ բացակայութեանս միջոցին
ո՞վ եկաւ հոս, կը հարցնէ չոր ձայնիւ մը:

— Նրէկ: Ո՛չ ոք:

Ծաղրական ժպիտ մը սաւառնեցաւ Ժիւլի
շրթանց վրայ եւ կրկնեց, ամեն վանկերը
չէլտելով.

— Նրէկ, կիրակի, մինչ գործով Փարիզ
կը գտնուէի, ո՞չ ոք եկաւ պարտէզը կամ
տունը:

— Ո՛չ ոք, պատասխանեց եւս քան զեւս
զարմացած: Ի՞նչ տարօրինակ հարցում եւ...

Թող չտուաւ որ աւարտէ:

— Կը ստես, ըսաւ բռնելով անոր երկու
ձեռները զորս խորտակելու չափ սեղմեց եւ
կատաղութեամբ յառելով իւր աչերն անոր
աչերուն:

Մա'թիլտի գլուխը զայրոյթի շարժում
մ'ունեցաւ: Իւր ձեռներն ազատելու հա-
մար թոթուելով զայնս, սառուցեալ ձայնով
մ'ըսաւ.

— Վայրենի կամ խենդ:

Ժիւլ թողուց զայն, այլ մանկամարդ կի-
նն անոր դիմաց վրայ խուլ կատաղութիւն
մը, զինքը բռնելու եւ թերեւս սպաննելու
յախուռն փափաք մը կարգաց եւ սոսկաց:

Իսկոյն հնչեցուց զանգակն, որպէս զի
տան միակ սպասուհին գար իրենց մէջ մտնել:
Առանց բառ մ'արտասանելու, Ժիւլ դուրս

եղաւ եւ պարտեցը խոյացաւ . Մաթիլտ կ'ուզէր անոր հետեւիլ, ստիպել որ բացատրութիւններ տայ, այլ իւր սրունքները չուզեցին քալել եւ աթոռի մը վրայ ինկաւ, գլուխը ձեռներուն մէջ : Իւր մտածումները խանգարուած էին . սրտատանջ կերպիւ ինքն իրեն կը հարցնէր թէ ի՞նչ պատահար, ի՞նչ աղէտ կրցած էր տեղի ունենալ ժամուան մը մէջ եւ այսպէս ի հիմանց դղրդել իրենց այնքան նոր եւ այնքան բարեբաւտ կեանքը :

Կը մոռնար իւր ամուսնոյն ժպտութիւնը, անորակելի վայրենութիւնը, եւ խանդաղատանօք կը յիշէր անոր առաջուան սէրը . եւ երբոր սպասուհին, Մարկըրիթ, վեր ելաւ, տեսաւ զայն որ կը հեծկլտար, աչերն յառած դատարկութեան մէջ, թեւերը կախուած :

Եւ ուզուէ, սպասուհին ուզեց գիտնալ պատճառը : Մանկամարդ կինը մեզմիւ ետ դրկեց զայն եւ փորձեց ոտքի ելնել : Չկըրցաւ . սենեակը կը դառնար իւր չորս դին եւ տախտակամածը կարծես կը պակսէր իւր ոտից ներքեւէն :

Իւր ամուսինը փոքրիկ ծառուղւոյ մը մէջ մտած էր եւ ուղղակի, տենդոտ քալուածքով, գնացած էր սարիինայի մը տակ զոր ձմեռը մերկացուցած էր իւր տերեւներէն եւ ուր, մինչ արեգակը կը սփռէր իւր կիզիչ ճառագայթները, ինք եւ նա կուգային կարգաւ եւ խօսակցիլ, միոյն ձեռքն միւսին ձեռքին մէջ, իրարու քով նստած գորովանօք :

Հազիւ տարի մը կար որ ամուսնացած էին եւ, որպէս զի աւելի իրենք իրենց լինին, որոշած էին ձմեռը գիւղն անցընել, ուր գէշ եղանակը կ'արգելուր այն ձանձրալի այցելութիւններն որոցմէ չպիտի կորնային խոստիիլ քաղաքին մէջ :

Թափուր սարիինային տակ, կը քննէր աւազը՝ ո եւ է հետք գտնելու համար անդ : Հոն չէր որ իւր առաւօտեան սովորական պտոյտն ըրած ժամանակ զարմանօք տեսած էր գլանիկ մը, հազիւ սկսուած, ճարտար ձեռքով փաթթուած գլանիկ մը, եւ որ պատէզին սեղանին տակ ինկած էր, գեղջկական նստարանին առջեւ, անտարակոյս . ընդհատեալ սիրային խօսակցութեամբ մը կամ մեղսապարտ խոստովանութեամբ մը :

Մարդ մը եկած էր անդ, նստած էր իւր կնոջ հետ, անոր հետ զոր էր Մաթիլտը կը կարծէր, այդ հրէշին հետ ոյր աչերը քիչ մը առաջ զարմացում կը յայտնէին եւ զոր իւր կրուկին տակ սպաննած կամ իւր երկու ջղուտ ձեռներով խեղդած չլինելուն վրայ կ'ստըմանար հիմա : Բայց ո՛չ, չափազանց կ'արհամարհէր զայն, հեռուն պիտի նետէր զնա, տիղմին մէջ, եւ օրէնքը պիտի քակէր այն երդումն զոր ինք տուած էր :

Ապահարգա՛ն . և չարութեամբ կը խընդար, ապա կը շառագունէր, կը տոգունէր եւ իւր սպիտակ ակաւյներուն տակ կ'որէր իւր երկար պեխը :

Այլ ստանալու համար այդ ապահարգանն, որ իւր վրիժառութիւնը պիտի լինէր, անպացոյցներ պէտք էին իրեն, կարելի եղածին չափ բազմաթիւ ապացոյցներ :

Սիրտը տրոփելով, փորձելով յուսալ տակաւին, կը դիտէր փայտեայ նստարանին երանդները, ջանալով նուազ խոնաւ տեսնել այն տեղերն, յորս կը խորհէր թէ « երկուքն » ալ նստած էին :

Բան մը չգտաւ . աչերն յառած ամբաստանիչ գլանիկին վրայ, անդ կը մնար, տրոգոյն, զսպուած բարկութենէն դողդոջուն, իւր մտաց մէջ հաստատուն գաղափարով մը որ իրեն կը թուէր թէ պիտի խենդեցնէր զինքն :

Մեքենական քայլերով տուն դարձաւ եւ իր աշխատութեան սենեկին մէջ, գրասեղանին առջեւ, խմբագրեց իւր գանգատագիրն՝ զրկելու համար զայն առում հարկ էր :

Կատաղութիւնը կը կուրցնէր զայն եւ ամբաստանութիւններն, աւելի լաւ է ըսել ենթադրութիւններն, իւր գրչին տակ իրարու կը հետեւէին դառն ոճով մը :

Երբ աւարտեցաւ, սփոփանաց հառաչ մ'արձակեց, այլ չէր կրնար զրկել զայն առանց վերստին կարդալու . ուստի իւր աչերը պտըտցուց առաջին տողերուն վրայ :

Ինք էր որ ահա կը նշաւակէր այդ ծաղկահաս կինն, զոր կը պաշտէր դեռ առջի օր, իւր իսկ կինը : Տղմին մէջ պիտի քաշկըռտէր զայն : Ահուրի էր այդ օրէնքն որ կ'ստիպէր զայրն ամենուն յայտնել իւր կընոյն անպատուութիւնը, երբ այնքան դիւրին է առանց աղմուկի քակել կապ մը որ դադրած է գոյութիւն ունենալէ :

Այն ատեն իւր մտաց մէջ սոսկալի կռիւ մը տեղի ունեցաւ . այդ կիներն, ինք, յետոս ընկրկած չէր ցեխին մէջ խորասուզելու համար անուան այն մարդուն զոր պարտէր սիրել, եւ սակայն վատութիւն կը թուէր իրեն դատարանին ոտից առջեւ նետել այդ որսն որ անպատուեալ միայն ոտքի պիտի ելնէր : Այդ յիշէր երիտասարդութեան ամեն գեղածիծաղ օրերն մինչ տակաւին ամուսնացած չէին . կը յիշէր այն համարյոյներն, գոռանքներն որք ապա եդեմ մըրած էին իրենց փոքրիկ տունը . իւր այտերը կը կարմրէին, իւր երեսին երակները պայթելու աստիճան կ'ուռէին եւ յանկարծական փափաքներ կ'զգար վեր ելնելու, եւ՝ արտասուազին՝ անոր ծունգերուն փարելով, առ յաւէտ ներելու իրեն առանց բացատրութիւններ պահանջելու : Այլ գլանիկը հոն էր, եւ գլանիկն յերեւան կը բերէր երիտասարդի մը դէմքը, սիրով զեղուն, զոր իւր կիներ դիտած էր, լսած էր անշուշտ . եւ իւր շրթները կը կծուէին, աչերը կը փայլիւնէին, ակոյսները կը կրճատէին . կը շարունակէր իւր ընթերցումը, եւ քանի մը բառ յետոյ, Մաթիլտի դէմքը վերստին կը գրաւէր իւր խռովեալ ուղեղն :

Սակայն ամբողջովին կարդաց այն բուռն եւ թշնամակից խօսքերն որք իւր վայրագ զայրոյթէն յառաջ եկած էին : Վատ գտաւ իւր գանգատագիրն եւ իւր ոտից ներքեւ կը կոխկռտէր զայն, երբ, Մաթիլտ, պաղ եւ վեհերոտ, տփռոյն ճակտով եւ արտասուաթոր աչերով, կամաց մը բացաւ սենեկին դուռն եւ ներս մտաւ :

Ձեռները սեղանին կրթնցուցած — հասկիւ կրնար ինքզինքը բռնել — առանց անոր երեսը նայելու, որովհետեւ ամուսինն իւր մօտեցած ժամանակ յանկարծ ոտք ելած եւ սենեկին մէկ անկիւնը քաշուած էր, ըսաւ .

— Ժիւլ :

Այլ անձկանաց եւ դորովանաց այնպիսի սրտայուզութեամբ մ'արտասանեց այդ բառն որ նա լսեց միայն հեշտալուր ձայնն որ քիչ մ'առաջ իւր տառապող սրտին առջեւ դրած էր իւր բոլոր անցեալ տրիփը եւ գընաց անոր ծնդաց առջեւ իյնալ, եւ հեծկլտանօք, իւր կնոջ ձեռները բռնելով իբր թէ ոչինչ պատահած էր, գոչեց .

— Ո՛հ, Մաթիլտ, կը սիրեմ զքեզ, կը ներեմ :

Նորաթի կիներն սկսաւ դողալ զարմացումէ եւ ուրախութենէ : Ար սիրէ՞ր զինքն . ուրեմն այլ եւս բան մը չկար : Իւր աչերը կը ճաճանչէին եւ երկար համարոյրէ մը յետոյ միայն յիշեց ներողութիւն բառը :

Բարկութեան սարսուռ մը դողացուց զայն :

— Ինչո՞ւ համար ըսիր թէ կը ներես ինձ թիւլ, հարցուց թրթռուն ձայնով մը :

Ժիւլ տնկուեցաւ եւ աչերն սկսան վեր ըստին փայլիլ չարութեամբ :

— Ըսէ թէ ոչ որ եկաւ հոս երէկ, չեց իւր սեղմուած ակոյսներուն մէջէն :

— Բայց ոչ, որ ոչ, բացարձակապէս ոչ որ : Սակայն չեմ հասկնար թէ ի՞նչ կը նշանակէ նմանօրինակ հարցում մը :

Երիտասարդին առաւօտեան կատաղութիւնը վերստին պիտի գրաւէր զինքն եւ արդէն պատրաստ էր նոր բռնութեան մը դիմել : Անգ առաւ քիչ մը շփոթած, եւ սիրտն ուժով մը բաբախելով, աչերը կատաղի կերպիւ յառած Մաթիլտի դիմաց վրայ, մատնանիշ ըրաւ, սպիտակ թղթի մը վրայ, գըլանիկն որ առաւօտէն ի վեր հազար չարչարանքներով տառապեցուցած էր զինքն :

— Ի՞նչ է այս գլանիկն, գոչեց զարմացմամբ . դուռն չեմ ծխեր : Ասի իմ գլանիկս չէ, յարեց տխուր ձայնով, զարմանալով որ եւ է խռովութիւն կամ խղճի խայթ չէր տեսներ այդ մանկամարդ կնոջ դէմքին վրայ :

Մաթիլտ խորհեցաւ, ինքնիրեն հարցընելով թէ այս ամենն ի՞նչ կը նշանակէ. ժամէ մ'ի վեր պատահած իրողութեան թելերը վայրկենի մը մէջ կապուեցան իւր մտաց մէջ, որ լուսաւորեցաւ . հասկցաւ թիւլի կասկածները, անբացատրելի զայրոյթը, որովհետեւ կը յիշէր, եւ իւր ամուսնոյն թեւերուն մէջ նետուելով, գլուխն անոր ուսին վրայ կրթնցուց եւ ցած ձայնիւ, իւր նայուածքն անոր աչերուն մէջ խորասուզելով .

— Պիտի ներես ինձ, ըսաւ, այլ ոչ թէ ենթադրած բանիդ համար : Ըսին ինձ թէ շատ սիրուն բան էր գլանիկին թեթեւ մուսին վերանալը տեսնել վարդագոյն երազներու մէջտեղը իմ բարեկամուհիներէս շատերօր մը պնդեցին ինձ թէ հաճոյալի զբօսանք մ'է ծխելն : Երէկ քովս չէիր, չափազանց կը ձանձրանայի : Աւելի անուշութեամբ մտա-

ծելու համար ժիւլիս վրայ, մարդ զրկեցի և անուշահոտ գլանիկներ բերել տուի : Պարտէզը գնացի, վառեցի եւ փորձեցի ծխել : Ո՛հ, ինչ գէշ էր, յարեց ժպտելով, ժամու մը չափ հիւանդացայ եւ գլուխս տակաւին կ'այրէր երբ հասար : Պարտէզին նստարանին մօտ էր, ապահով եմ, չա՛ր, որ դտար գլանիկս զոր այժմ կը ճանչեմ :

Մանկամարդ կնոջ ձայնին, կեցուածքին, խօսքերուն, դէմքին վրայ խոր եւ պարզ ճշմարտութեան այնպիսի արտայայտութիւն մը կար որ տակաւ առ տակաւ ժիւլի զայրոյթն իջած էր, սքանչացման ժպիտ մը կիսով իմն բացած էր իւր շրթները, եւ, տըրփով, իւր կուրծքին վրայ սեղմեց զայն զոր այժմ հազար անգամ աւելի սիրել կը թուէր :

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՏՐԱՊԻԶՈՆ

Տրապիզոնի հայեացքը, երբ մէկը արեւելքէն մօտի իրեն, զարմանալի գեղեցիկ է : Սուրմէլի բերնի արեւմտակողմէն գրեթէ երկու մղոն անդին ցած սարաւանդ մը հիւսիսէն ծովը կ'իջնէ, ու գեղեցիկ ծովախոր մը կը կազմէ : Այս լեռնացուկի արեւելակողմն, բացառելով իր ծայրն, որ լեռի ժայռ մը կը մնայ, գեղեցկաչէն տներ կան . կղմիտրով տանիքներ ու զանազան ներկեր ունին ասոնք, սպիտակ, դեղին, կարմիր ու կանաչ : Թարմ պարտէզները կը շրջափակեն ասոնք, ու գագաթը կը պսակէ մեծաբուն նոճենիներու երկար դիժ մը, որ հին թրքական գերեզմանոցի մը դիմաց կը ցուցունէ : Այս շէնքերն արուարձանի մը կը վերաբերին . քաղքի մեծ բաժինն այս կողմէն չտեսնուիր : Զանազան ազգութիւններու տարազները խառնուտիկ բան մը կ'արտադրեն հոս . ասոնց մէջ աչքի կը զարնեն Պարսիկներն, որք երկար սեւ կամ բոլորչի թուխ անկնատեսակ գլխարկներ կը կրեն, ու երկար պարեգօտներ, որք ոտքի կոճը կը հասնին, երբեմն բոլորովին մաքուր ձերմակ, երբեմն կանաչ, որ իրենց սիրելի գոյնն է :

Այս արուարձանի արեւմտակողմն կ'իյնայ Քրիստոնէից ընդարձակ թաղն : Այս տեղի բոլոր ժողովուրդը 52,000 կը հաշուեն, որի 2,000 հայ, 7,000 կամ 8,000 յոյն ու մընացածները թուրք են :

— Այն դիմքը, զոր այս հելլէն ու միջնադարեան քաղաքը կը բռնէ, խիստ նշանաւոր է . առջի տեսութիւնովը զարմանալի կ'երեւի, որ առջի բնիկներն լեռնացուկն, որ ծովածոցին կը տիրէ, ու պաշտպանութեան նպատակի խիստ յարմարութիւն ունի, տեղ չէն ընտրել իրենց . բայց տեղւոյն վրայ աւելի մօտիկ ծանօթութիւն մ'ունենալն անմիջապէս կ'արդարացնէ իրենց ընտրութիւնն : Հոս երկու խոր հովիտներ ներսէն ելնելով մէկ մէկէ ոչ շատ բացութիւնով ծովի կողմը կը զուգընթանան, ու շեղ տափ երկիր մը կ'առնեն իրենց մէջ — ասկէ քաղքի նախնական սնունը, «Տրապիզոն կամ Տափ երկիր» — որ երկու կողմէն առելի ժայռային գահաւանդներ ունի : Այս ամենքը դեռ Բիւզանդեան պատերով ներփակուեր են, որք պարեխներու գծին կը հետեւին, ու ծովակողմի երկանքը կը տարածուին : Մակարդակի վերի մասն, որ ներքին շեղ պարսպով մը վարինէն զատուեր է, բերդը կը կազմէ . վերնագոյն կէտի վրայ, ուր երկու հովիտներու մէջ տեսակ մը կիրճ կը կազմուի, պահակատունը կը գտնուի, որ կը պսակէ ամենքը : Այս պահակատան ու ծովի մէջի գրեթէ կէս ճամբու վրայ, ամեն մի կողմէ ամրաշէն կամուրջներ կը խաչեն հովիտներն, ու ասոնց արեւմտեան միւս կողմն, քաղքէն անդին, մեծ բերդ մ'ուռլիչ ամրութիւններ կը կենան, որք այս կողմէն թշնամիի մերձեցումը արգիլելու ծառայեր են . այս ամրութիւններէն ու իրենց շրջակայներէն աւելի նկարչական բան մ'ըմբռնել դժար է : Այն եռակի գիծը շուրին ասոնք իրօք, որք Կ. Պոլսոյ ցամաքակողմի հին պարիսպներն այնպէս զարմանալի կ'ընեն, բայց պարեխներու այն անկանոնութիւնն որին կը հետեւին, ու կրոր ու անկիւնաւոր բերդաւաններն խիստ մեծ զանազանութիւն կ'ընծայեն աչաց . այս բերդերէն շատերն լոյտակներ կը ծածկեն : Այն պարտէզներն, որք երկու նեղ հովիտները կը բռնեն, ճոխ բոյսեր կը բերեն, ու ասոնց մէջէն կողմէ մը գեղաշուք լեռներու վրայ

կ'որոշարի մարդուս աչքը, ու միւս կողմէն կապուտակ Եւքսինի՛ վրայ :

Տրապիզոնի բաղադրն Սինոբի դաղութն է. բայց Բիւրուց Նահանջի ատեն առջի անգամ ճանչցուեցաւ. ասոնք հանգիստ դտան այս տեղ ու բնիկներն հիւրընկալեցին զիրենք : Իր հեռաւոր դիրքը պատճառ եղաւ, որ Յունաց պատմութեան մէջ փոքր կարեւորութիւն ունեցաւ անիկա. բայց Ասիոյ ներսի յարաբերութիւնով իր ունեցած դիրքը այն ատեն ու անկէ ի վեր ծաղկեալ վաճառատեղի մ'ըրաւ զինք : Սակայն իւր իրական մեծութիւնը խիստ վերջի ժամանակամիջոցի մը կը թուադրուի, ու կրնայ ըսուիլ, որ գրեթէ դէպքի արդիւնք է : Այն խայտառակ աւազակային արշաւանքի ատեն, որ Զորորդ Խաչակրութեան (1204) պատուանունը կը կրէ, երբ Բիւզանդեան կայսրութիւնը կտրատուեցաւ ու իր մայրաքաղաքն Լատիններն գրաւեցին, Կոմնենեան տան մէկ ճիւղը, Ալէքսիոս, Ասիա փախաւ, ու Սբիրացի վարձկաններու բանակ մը կազմելով Տրապիզոն մտաւ. հոն իբր օրինաւոր վեհապետ ճանչցուեցաւ, ու Մեծ-Կոմնենոս տիտղոսը կրեց : Թէպէտ քսան երկու տարեկան, Ալէքսիոս ճարպիկ ու բացարձակ կամքի տէր մէկն էր, եւ որովհետեւ անիշխանութեան այս ժամանակամիջոցի մէջ քաջ վարիչ մը ամենուն փափաքելի բանն էր, առանց դժուարութեան յաջողեցաւ Սեւ ծովի հարաւակողմի մեծ բաժնին տիրել : Երկուք ու կէս դար տեւեց այս կայսրութիւնն ու Մահմետ Բ. Պոլլան առնելէն ութ տարի վերջ աս ալ վերջացուց : Իր անջատ դիրքն զոր կողմէ մը ծովը կը պաշտպանէ, ու միւս կողմէն այն բարձր չղթաներն, որք իր ու փոքր Ասիոյ մէջ կ'անջըրպետեն, իր տեւողութեան միակ պատճառն ու իր պատմութեան գաղտնիքն եղան : Այս միջոցներով կրնար արտաքին թշնամեաց յարձակումները բանի տեղ չդնել ու Նիկիոյ ու Կ. Պոլսոյ կայսրերու դէմ պաշտպանել իր անկախութիւնն. բայց այս պատճառի համար իր քաղաքականութիւնն միշտ նեղ էր, ու երբէք իրական մեծութեան չհասաւ, կամ ամբողջօրէն առնելով, երկրի վրայ բարի ազդեցութիւն մը չբանեցուց : Բիւզանդեան մեծ կայսրութեան տեսագծերէն շատերը կը ցոլացնէր իր վրայ որի մանրանկարն

էր, բացառելով անոնք, որք իր իրական ոյժն ու մեծութիւնն տուին իրեն : Տրապիզոնի պալատն անուանի էր իր չբեղութեան համար, արքունիքն իր ցոփութեան ու իր նրբին արարողութիւններու համար, նոյն ատեն դաւի ու անբարոյականութեան աղբիւս մ'էր : Երկրի բնակիչներն, Յոյն կամ Լազ, զօրեղ ցեղեր էին, երկիրն ալ առողջ ու բեղուն : Կառավարութեան համար եթէ լաւագոյն բան մը կայ ըսելու, այն էր, որ անիշխանութենէ կը պահէր ժողովուրդն, ու այնպէս այս առաւելութիւնները վայելելու կարող կ'ընէր զանոնք : Ասիկա ընեն անհրաժեշտ էր իր գոյութեան համար, բայց իր հպատակներու աւելի զարգացման կամ յառաջդիմութեան համար քիչ մը հոգ միայն ունեցաւ :

Մի եւ նոյն ատեն վէպի զօրաւոր նիւթ մը կայ այս հեռաւոր կայսրութեան պատմութեան ու այսպիսի վայրենի երկրի մը չրջակայքի մէջ եղած այսչափ կոկիկութեան մը գոյութեան մէջ : Կայսերական ընտանիքը, մարդ ու կնիկ, գեղեցկութեան անուն ունէին, ու խիստ հեռու երկիրներու թագաւորներն ու ցեղապետներն հարսնութեան կ'ուղէին այս ցեղի իշխանուհիներն : Ոչ միայն Պալէօլոկեան հարստութեան, Բիւզանդեան կայսրերու, ձենովական ազնուականներու, ու Խաչակիրներու, այլ Մահմետական իշխաններու հետ ալ ամուսնացած կը գտնենք մենք զասոնք — Պարսկաստանի ու Մոնկոլներու ու Թուրքօմաններու վարիչներու ու Թրքական Իմիրներու տղոց հետ, ու այսպէս կազմուած կապակցութիւններ ոչ միայն դիւանագիտական յարաբերութիւններու տարբերութիւն մը, ու բարեկամական կամ թշնամական դաշնակցութիւններ ծնան, այլ ասպետականութեան ու բախտախնդրութեան զանազան պատմութիւններու նիւթ տուին : Մեծն Կոմնենեանքն արուեստի ու ուսման պաշտպան էին, ու հետեւաբար շատ երեւելի մարդիկներ կը յաճախէին իրենց ապարանքը, որոց ազդեցութիւնով պալատի գրատունը մեծագին ձեւագրեր ունեցաւ, ու քաղաքը փառաւոր շէնքերով զարդարուեցաւ : Տեղւոյն տեսարանն, իրօք, իր յաջողութեան գլուխն եղած ատեն, պէտք է ճշգրտար դիւթիչ եղած ըլլայ : Այն ժաման-

նակի հեղինակներն իր բարձր բերդերու, արուարձաններու, եկեղեցիներու ու վանքերու, ու մասնաւորաբար պարտէզներու, միգաստաններու ու ձիթենոցներու վրայ, զորս կուարձալի, բայց խոնաւ կլիմայն լաւ կ'արգասաւորէր, հիացումով կը խօսին: Կօնցալէս Կալվիթօի, սպանիական պատգամաւորի զարմանքը շարժեց, երբ անկէ անցնելով Սմրզանդն, Թիմուրի արքունիքն այցելելու կ'երթար անիկա: Կարդինալ Բէսարիօն, որ տեղւոյն բնիկն էր, իր կեանքի վերջին բաժնի մէջ, երբ քաղաքը Մահմետականներու ձեռքն անցաւ, ուր նոյն ինքն նա հռոմէական եկեղեցւոյ պատուակալն էր, այնչափ քիչ մոռցաւ անոր իր վրայ ըրած ազդեցութիւնը, որ «Գովեստք Տրապիզոնի» անուն գիրք մը գրեց:

Հին քաղքի մակերեւոյթի մէջ գլխաւոր հնութիւններէն մէկը միայն կը մնայ. Օրթա - Հիսար մզկիթն է ասիկա, որ երբեմն քրիստոնէական եկեղեցի էր, Բանայա Խրիսթէֆալօսի կամ Ոսկեղլուխ Կուսին նուիրուած, Բիւզանդեան չէնքի լաւ պահուած օրինակ մը, որի նախնական չէնքն այն ատենէն ի վեր հազիւ փնտս մը կրեր է, բացառելով այն նախնական կարգադրութիւններն, որը հարկաւոր են Մահմետական պաշտաման յարմարցնելու համար զինք: Արեւելեան հեղեղատի միւս կողմն, որ բերդի դէմ զարմանալի գիրք մ'ունի, ուրիշ մզկիթ մը կայ, Եէնի - Ճուսա Ճամի, կամ Նոր-Ուրբաթի մզկիթ, նախապէս Տրապիզոնի պաշտպան Ս. Եւգինիոսի եկեղեցին, որ կ'ըսուի թէ Դիոկլետիանոսի հալածանքի ատեն մարտիրոսուեր է հոս. խիստ փոքր չէնք մ'է ասիկա, բոլորովին պարզ, բայց սքանչելի իր համեմատութիւններու մէջ. կատարեալ յունական խաչ մը կը կազմէ ասիկա իր նրբին գմբէթով, զոր կը ծակոտեն բազմաթիւ մանր լուսամուտներ: Հիւսիսակողմէն մեծ մինարէ մը աւելցուցեր են հիւսա իր վրայ:

Իր տիրող դիրքի շնորհիւ, այս եկեղեցին, որին նախապէս կից էր վանք մը, քաղքի պատմութեան մէջ կարեւոր դեր մը խաղաց, ու մեծագոյն պաշարման ճգնաժամի տեսարանն եղաւ: Անդրոնիկոս Ա. երկրորդ կայսեր թագաւորութեան ատեն պատահեցաւ այս: Յարձակող ոյժն Սէլճուքներու բա-

նակն էր, որին կը հրամայէր մեծ Սուլթան Ալաէտօղլուն որդի Մէլիքն. ծովի ուղղութիւնով հիւսիսային պարսպի վրայ ապարդիւն յարձակում մ'ընեկէն վերջ, հակառակ կողմէն որոշեց յարձակում ընել:

«Տրապիզոնի վրայ յարձակելու մօտագոյն փորձն հարաւէն եղաւ. իր բանակի մի ջոկատովը վերին միջնաբերդի պարսպի առջեւ երկու մեծ հեղեղատներու մէջի նեղ սարահարթն բռնեց Մէլիքն: Իր բուն բանակատեղն Ս. Եւգինիոսի վանքն էր, նոյն ինքն եկեղեցին իր հաբէժի նստեցատեղը: Գիշերային յարձակումով մը որոշեց յանկարծակի բերել վերին միջնաբերդն, բայց այն մթութիւնն, որ գործողութեան յաջողութեան պիտի օգնէր, թրքական բանակի կործանումը բերաւ: Պաշարողներու երեք ջոկատներն արեւելեան արուարձանն, Ս. Եւգինիոսի բլրակն ու միջնաբերդի վերի սարահարթն բռնելով խոր հեղեղատներով մէկմէկէ զատուած էին, սակայն մէկտեղ գործելու խօսք եղած էր իրենց: Երբ յարձակող բաժնին օգնելու համար գնդերն կառաջէին, սոսկալի փոթորիկ մը կարկուտի մըրիկով մ'ու անձրեւի հեղեղով մը յանկարծ հեղեղատներու մէջի հոսանքներն բարձրացուց: Ս. Եւգինիոսէն ու արեւելեան արուարձանէն սարահարթի ժայռային զառիվերն չէին կրնար ելնել բանակներն, ու երբ հեղեղատը կ'անցնէին, մի քանիներն հոսանքէն քուլեցան: Հիւսիսակողմի կեղծ յարձակումն ետ մղուեցաւ, ու բոլոր յարձակումը պարսպ ելաւ: Ջարդուած գնդերն ամեն տեղ անոնց վրայ կը մղուէին, որք իրենց օգնելու խօսք առեր էին: Հեծեալազօրքն, ձի ու մարդ, դահաւանդներու վրայ քշուեր էին: Հետեւակն հեղեղներու մէջ մղուեր էր, որք լեռներէն վար կը թափէին, ու խառնաչփոթութիւնն շուտ մը անմեկնելի եղաւ: Երբ մրրիկի կատաղութիւն անցաւ, ու պահակագնդի տեղային ծանօթութիւնն քիչ մը բանի բերել կարելի եղաւ, հիւսիսային դռներէն Մէլիքի բանակատեղիի դէմ յարձակում մը ուղղեցին: Բոլոր Սէլճուք բանակն այն ատեն խառնաչփոթ փախաւ, իր բանակն ձգեց, ու ամեն բան թշնամիին թողուց: Նոյնինքն Մէլիքն դասալիքներուն ընկերացաւ, ու Մաթցուքայի լեռնականներու բաժին մը Գուրատիօնի մէջ գերի բռնեց զինք: Յաղ-

Թուեցան փառքը Ս. Եւգենիոսին վերագրուեցաւ, որի պատմութիւնն շատ մը վէպերով ձոնացուցեր է անիկա : (Ֆիւնիք, Պարսկէան Յոնապարտէ) : »

Բոլոր հին եկեղեցիներու խիստ աւելի կարեւորն է Այիա Սօֆիայի եկեղեցին, զոր Տրապիզոնի Մանուէլ Ա. կայսրն շինեց. աւրեւմտակողմէն մօտ երկու մղոն անդին կ'ընայ ասիկա. փառաւոր դիրք մ'ունի ու ծովը կը ծծէ : Հոս է Քապաք - Մէյտան կամ «Դգմի հրապարակ», ընդարձակ բաց տեղ մը. դուցէ Տրապիզոնի միջնադարեան քօջ խաղի տեղն է ասիկա, որ այս զբօսանքի համար սքանչելարար յարմար եղած է : Տրապիզոնի ու Կ. Պոլսոյ ազնուականներու սիրելի խաղն էր ասիկա, ու արդի քօջի պէս աւելի ձիու մէջքի վրայ կը խաղցուէր : Այն գրգիռը, զոր կը պատճառէր ասիկա հանդիսատեսներու մէջ, կը հաւասարէր ձիւնթացի գրգիռին, ու կ'երեւի որ վտանգաւոր եղած է : Տրապիզոնի Յովհան Ա. կայսեր մահը պատճառեց, իր ձիէն վար ձգելով, ու Կ. Պոլսոյ աւելի անուանի Մանուէլ Ա. գրեթէ այս կերպով սպաննուեցաւ :

Յ. ՏՈՒՏՈՒԽԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Տ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

15-21 ՅՈՒՆԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Յունիս 24ին, Անգլիոյ Թագուհին նախագահեց Պետական Խորհրդոյ մէկ հանդիսաւոր նստին, յորում նախորդ Նախարար իրենց պաշտամանց կնիքներն յանձնեցին Ն. Ահհափառութեան, որ զանոնք տուաւ նոր Նախարարներուն : — Պ. Ալատըսդոն Երեսփոխանաց Ժողովոյն մէջ կարդաց Թղթակցութիւն մը, որ փոխանակուած էր իրեն և Լորտ Սալիսպըրի միջեւ, նախարարական տաղնապին կարդադրման համար :

— Թայմ իւր վերջին թուով կը ծանուցանէ թէ Սըր Հէնրի Տրամլընտ Ուոլֆ, երբեմն անգլիական առաջնակարգ լիպիցր Արեւելեան Բուժելի կաղմակերպիչ Յանձ-

նաժողովոյն, Եգիպտոս պիտի ղրկուի որպէս քաղաքական գործակալ Սըր Իվին Պէյրլնկի տեղ :

— Պահպանողական նոր Նախարարութեան Երեսփոխան անդամք ըստ օրինի հրաժարած են Երեսփոխանութենէ, և վերընտրութեան համար դիմած են իրենց ընտրողաց. զի ամեն Երեսփոխան որ կառավարական պաշտօն կ'ընդունի, պարտի դիմել իւր ընտրողաց վճռոյն, տեսնելու համար թէ զինք պիտի վերահաստատեն Երեսփոխանական պաշտաման մէջ :

— Տիգրիսէ յունիս 10/22ին կը հեռագրեն թէ Կաւկասիոյ կրթական վերատեսուչ Պ. Եանովաքի Շըջաբերական մը հանած է, որով կը յայտարարէ թէ Մինկրելիոյ Վրաց դպրոցներուն մէջ կրօնագիտութեան դասերուն վրացերէն աւանդման կայսերական արտօնութիւն շնորհուած է վերստին :

— Յրանձական Ակադեմիան յունիս 25ին գումարեցաւ յաջորդ մ'ընտրելու Պ. Էտմոն Ապուի : Ներկայ էին 52 «Անմահներ», ընդ նախագահութեամբ Պ. Մաքսիմ Տիւ Քանի : Հինգ անգամ քուէարկութիւն եղաւ, բայց ոչ մէկ ընտրելի ստացաւ մեծամասնութիւն : Առաւելագոյն քուէ առին Պ. Տրոզ (12) և Պ. Լէոն Սէ (9) : Նոր ընտրութիւն մը պիտի լինի աշնան :

— Տոնկուա, 25 յունիս. — Լուիճի Պոնովի իտալացի վարդապետն որ գերի էր Մէհտիի ձեռքն, յաջողեցաւ փախչիլ և աստ հասաւ : Կը պատմէ թէ Սուա Մարգարէին ձեռք ինկած ուրիշ եւրոպացի վարդապետք եւս քաջառողջ են : Քորտոֆանի մէջ Մէհտիին դէմ յարուցեալ ապստամբութեան լուրերն յոյժ չափազանցուած են : Պ. Պոնովի կը հաստատէ թէ Սենաարի եգիպտական պահապան զօրքը քանիցս ծանր կորուստներ կրել տուաւ Մէհտիին : Սոֆն և հիւանդութիւնք մարդոց բազում կորուստներ կը պատճառեն ի Քորտոֆան :

— Լորտերուն Ժողովն յունիս 23ին, 8 ժ դէմ 56 քուէով մերժեց կանանց քաղաքական ընտրողութեան իրաւունք տալու առաջարկը, զոր կ'ուզէր պաշտպանել Լորտ Տէնման : Ծրագիրը նախափճով մերժուեցաւ իբրեւ «անդէպ» :

— Իտալիոյ մէջ նախարարական տաղնապը չէ վերջացած տակաւին : Պ. Մանչինի յա-

Նորդ գտնելու համար դժուարութիւն կը քաշէ : Վիէննայի իտալական դեսպան Պ. տը Ռոպիլանդ մերժեք է գայս պաշտօն որ իրեն կ'առաջարկուէր : Կ. Պոլսոյ դեսպան Քորդի կոմսին խօսքը չկայ :

— Մանդայֆըլ Մարէշալին մահուամբ (որ Ալզաս-Լոռենի Կուսակալ կամ Փոխարքայ էր) վերաբացուած է սա խնդիր թէ Ֆրանսայէն վերջերս առնուած սոյն երկու գաւառներ յետ այսորիկ ի'նչ դրութեամբ պիտի կառավարուին . — բացառիկ վարչութեամբ մը , ինչպէս մինչեւ հիմա , թէ իբրեւ հասարակ գաւառ մը : Քոյն Զայ-բա՛նկ յունիս 28 թուով կէս-պաշտօնապէս կը յայտարարէ թէ այս խնդիր բաւական ժամանակ բաց մնալ սահմանուած է : Կը կարծուի սակայն թէ Վիէնէլմ Կայսեր թուռ , Վիէնէլմ իշխանը , կամ Կայսերական գերդաստանին ուրիշ մէկ անդամը պիտի կոչուի այս պաշտաման , և այս դո՛ւ պիտի ընէ Ալզաս-Լոռենի Ֆրանսացւոց արժանապատուութիւնը :

— Կը հաւատեն թէ Լորտ Սալիսպորի յոյժ բարեկամական ապահովութիւններ տուեր է Ֆրանսական դեսպան Պ. Վատինկոնի , և ջերմ փափաք յայտներ է համաձայնութեամբ լուծելու Ֆրանսայի հետ առկա մնացած բոլոր խնդիրները :

— Լոնտոնի նորագոյն հեռագրեր կը ծանուցանեն թէ ըրտ Սալիսպորի չպիտի փոփոխէ Լորտ Կրանվիլի ըրած կարգադրութիւնները վասն լուծման անգլո-ռուս խնդրոյն :

— Օսմանեան Կայս. կառավարութեան կողմէ Տրիպոլիս հետզհետէ զօրք և ռազմամթերք ղրկուելուն առթիւ Թայֆի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ . « Օտար տէրութեան մը Պէրպէրստանի Օսմ. ստացուածոց դէմ անուցանել կարծուած թշնամական դիտմունք հոգ կը պատճառեն միշտ : Այս օրերս Տրիպոլիս ղրկուած մարտանաւէն զատ , Սալիսպոր անուն անգլիական փոխադրանաւն որ նոր գնուեցաւ և ճիւղէ անունն ստացաւ , վաղը Տրիպոլիս կ'երթայ Քրուբի 7 խոշոր թնդանօթներով և վաղտ մը հետեւակազօրօք : Տրիպոլսոյ և Պէնկապիի նաւահանգիստը պիտի պաշտպանուին ընդծովեայ ականներով : Ծովեզերքը մեծ զգուշութեամբ կը պահպանուի , թող չտուլու համար որ գաղտ-

նապէս զէնք և վառօդ տարուին Արաբներուն , զորս օտարազգի մեքենայիչք ունեք կը դրդեն ի խռովութիւն : Մի քանի օրեր առաջ Օսմ. պահակ նաւերը բռնեցին Մալդացի նաւ մը , վառօդով ի , Տրիպոլսոյ ջուրց մէջ : »

— Մատրիտ , 26 յունիս . Վերջին 24 ժամուց մէջ , հնտախտն յոյժ աճեցաւ Մուրչիոյ քաղաքին և Վալենչիոյ նահանգին մէջ : Հնտախտն սկսած է ճարակիլ նաև Թոլէտայի , Ալիքանդէի և Սարակոսայի նահանգաց մէջ : Թոլէտայի զինուորական վարժարանը փակեցաւ : Յունիս 25 ին ի Մատրիտ 9 մարդիկ հնտախտէ բռնուելով 4 ը մեռան : Ծովային նախարարը Տոքթ. Ֆէրրանի արտօնութիւն կուտայ հնտախտի պատուաստն ի գործ դնել նաւարանին և նաւատորմին մէջ :

— Թայֆ կը հրատարակէ Պ. Կ. Յակոբեանի յունիս 15 թուով մէկ նամակն , ուղղեալ առ Պ. Կլատտոն , ում իւր հրաժարման առթիւ՝ պարտաւորութիւն կը համարի յանուն իւր ազգակցաց շնորհակալիք յայտնել ինչ ինչ ծառայութեանց համար զորս մատուցեր է իւր պաշտօնավարութեան միջոցին : Հրաժարեալ Նախարարապետն իւր քարտուղար Պ. Համիլթընի միջոցաւ կը պատասխանէ յունիս 20ին , շնորհակալութիւն յայտնելով Պ. Կ. Յակոբեանի զգացմանց համար , եւ ապահովելով զնա թէ ինչպէս մինչեւ ցարդ նաեւ յետ այսորիկ պիտի տածէ խորին համակրանք իւր ազգակցաց վրայ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Խըբթայէ Շէքէֆի հանդէսը կատարուեցաւ այս չորեքշաբթի օր Թօք-Փաբուի հինաւորաց պալատան մէջ մեծաւ շքեղութեամբ : Որոշեալ ժամուն բոլոր նախարարք , իւլէմայք եւ բարձրաստիճան պաշտօնատարք փութացած էին ներկայ գտնուիլ յիշեալ պալատան մէջ : Վեհ. Սուլթանը ժամ 6 ին միջոցները ելլալով պալատէն մեկնելով քառաձի կառք մը նստաւ , յորում , ինչպէս սովոր է այդպիսի հանդիսաւոր աւուրց մէջ , Օսման եւ Նամիզ փաշաներ պատիւ ունեցած էին Ն. Կ. Վեհափառութեան դիմացը նստելու : Հանդիսաւորք Ղալաթիոյ ճան-

բով կամուրջն անցնելով հասան յիշխալ պալատն, եւ Սօսեղ - Չէչմէ կոչուած դըռնէն ներս մտան : Երբտեղէն ի Թօփ - Գափու, ամբողջ ճանապարհը լցուած էր անհուն բազմութեամբ :

Հանդիսի կրօնական արարողութիւնը կատարուեցան այն նուիրական յարկին ներքեւ, ուր պահուած է Իսլամաց Մարգարէին վերարկուն : Վեհ. Սուլթանը մեծաւ երկիւղածութեամբ մօտենալով նուիրական Վերարկուն, որ ճարտարարուեստ պահարանի մը վրայ դրուած էր, բացաւ զայն եւ ջերմաջերմ համայրներ ձօնեց . այդ պահուն Ն. Կ. Վեհափառութեան առնթեր կը գըտնուէին Մեծ-Եպարքոս Բարձր. Սայիտ փաշա, Շէյխ - Իւլ - Իսլամ Խսատ էֆէնտի եւ քիչ մը հեռուն քաղաքային եւ կրօնական բարձրաստիճան պաշտօնատարք, որք Վեհ. Սուլթանի հրամանաւ հետզհետէ մօտեցան ի համբոյր Վերարկուն :

Հանդէսը ժամ 10 ին աւարտեցաւ եւ Վեհ. Սուլթանն իւր փառահեղ կառքը նըստելով թափօրը նոյն շքով մեկնեցաւ անտի եւ անցնելով մեծ պողոտայէն, Սուլթան Պայագիտի հրապարակէն, Շահգատէ - Պաշէն եւ Վէֆայի հրապարակէն, հասաւ կամուրջ եւ ուղղակի դարձեալ Ղալաթիոյ ճանբով Երտըզ վերադարձաւ : Վեհ. Սուլթանուհին եւս ներկայ գտնուեցաւ սոյն հանդիստէր արարողութեան եւ վերադարձին ճանբուն վրայ բազմաթիւ կարօտելոց նուէրներ բաշխեց :

— Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ 8500 զրուշ ամսաթոշակ յատկացունել Վանայ նախորդ կուսակալ Հասան փաշային : Այս ամսաթոշակ՝ որ պիտի տրուի կառավարական դանձէն, պիտի շարունակուի ցորչափ Հասան փաշա անպաշտօն մնայ անձնական վատառողջութեան պատճառաւ :

— Բաղէշի. Վանի եւ Հէքքեարիի նահանգաց դատական ըննիչ Սալիհ պէյ՝ երբեմն կառավարիչ Սուրիոյ, Տիարսէքիի եւ Խարբերդի նահանգաց դատական ըննիչ անուանեցաւ :

— Սթէնքէն կը դրեն թէ հելլենական կառավարութիւնն հաստատած լինելով թէ Պոլսոյ զանազան կողմերը որթածնին կը ճարակի, արդիւր՝ է ո եւ է որթատունկի ներմուծումն ի Յունաստան : Սրդէլքն ընդ-

հանուր է, եւ ի գործ պիտի դրուի չէ թէ միայն Պոլսէն եկածներուն, այլ նաեւ Արեւելեան Ռումէլիէն, Պուլղարայէն, Սամուէն, Կրէտէն, Կիպրոսէն եւ Եգիպտոսէն ներածեալ որթատնկոց համար :

— Կը յիշեն ընթերցողք թէ, կ'ըսէ Հաֆէաթ, Վիչէն անուն արուեստագէտ մը զենուած ոչխարներն ուռեցնելու համար օգտուենք գործիք մը հնարած էր : Սոյն գործիքի օգտակարութիւնը բժշկական վարժարանէն եւ պետական խորհուրդէն ճանչցուելով, նախամեծար համարուած էր սորա կիռարութիւնն, նկատելով թէ արտաւոր զենիչի մ'ապականեալ շունջն որ կը ներմուծուի ոչխարաց մորթին եւ մօին մէջ միշտ վնասակար է առողջութեան. մինչ իսկ եթէ զենիչն արտաւոր ալ չլինի, արտաշնչեալ օդն արդէն իսկ ապականեալ է :

Այդ գործիքի հնարիչը մինչեւ այսօր տակաւին չէ կրցած առանձնաշնորհում ըստանալ, եւ կը լսենք թէ մասվաճառները նկատելով որ այդ գործիքն իրենց շահուն կը դպչէր, զայն անգործածութեան մատնելու նպատակաւ պէտք եղած միջոցներու ձեռնարկեր են :

— Կուսակալի մը կողմէ անցեալները Բ. Դրան մատուցեալ տեղեկագրոյ մը վրայ, կայս. կառավարութիւնն արգիլած էր կանեփի մշակութիւնն, որովհետեւ դաւառաց մէջ շատեր ծխախոտի տեղ կանեփի ծխելու սովորութիւն ունին, որ յոյժ վնասակար է հանրային առողջութեան :

Այս արգելք երկրին երկրագործութեան կարեւոր մէկ ճիւղը դադրեցուցած լինելով, մեծ վնաս հասուցած է հազարաւոր երկրագործաց որք կանեփի մշակութեամբ կ'ապրէին եւ միանգամայն պատճառ եղած է որ Յունաստանի մէջ մեծապէս բազմանայ այս մշակութիւն : Յառաջագոյն Յունաստանէն երկու միլիոն Փրանքի կանեփ դուրս կը հանուէր, մինչ այժմ՝ այդ երկիր 12 միլիոն Փրանքի կանեփ կը զրկէ ի Թուրքիա :

Ս. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն այս կիրակի օր Գուգիլունճուգ երթալով այցելութիւն տուաւ Ամեն. Խրիմեան Սրբազան Հայրի-

կին, Երմուական նախարար Միւնիր փաշա-
յին եւ անտի Պէշիկիթաշ անցնելով, նախա-
դահեց Մաքրուհեան երկսեռ վարժարանաց
մրցանակաբաշխութեան հանդիսին:

— Ամեն. Ս. Պատրիարք Հօր առաջար-
կութեամբ եւ Կրօնական Ժողովոյ որոշմամբ,
Գեր. Արիստակէս Եսսկուպոս Դերձակեան
կը պատրաստուի Մշոյ Ս. Կարապետի վանքն
ուղեւորիլ իբրեւ վանահայր: Անտի պիտի
երթայ ի Տիգրանակերտ՝ Ժողովուրդը խա-
ղաղելու եւ ազգային Ժողովները վերակազ-
մելէ վերջը առաջնորդական ընտրութիւն
կատարելու համար:

— Գոհութեամբ կը լսենք թէ Ամեն. Խը-
րիմեան Սրբազան շատ մը վանեցիներու
յայտարարած է թէ վանայ ցոյցերը փա-
սակար են ամեն կերպով, փնտաակար են
Ազգին եւ նոյն իսկ իւր անձին, եւ յորդո-
րեր է զանոնք որպէս զի ետ կենան եւ ի-
րենց հայրենակիցներն ետ կեցնեն այդ ծա-
նուցեալ չարժուիներէ:

— Երուսաղէմի Պարտուց Բարձման Յանձ-
նաժողովն այս չորեքշաբթի օր գումարեցաւ
ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ
Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ 5 դահեկան
բաժնետրոց մայրաքաղաքիս բնակչաց փրայ
բաշխման գործողութեամբ զբաղեցաւ: Մին-
չեւ ցարդ մայրաքաղաքիս մէջ կատարուած
թաղային վիճակագրութիւններէն հասկըց-
ուած է որ մայրաքաղաքիս մէջ հապիւ
50,000 արու կը գտնուին: Քանի մը թաղեր
իրենց մարդահամարը տակաւին կատարած
չլինելով, հարկ եղած ազգարարութիւնը
պիտի լինի այնպիսեաց:

Արժ. Գարրիէլ վարդապետ Անուշեան
Յանձնաժողովոյ քարտուղար անուանեցաւ:

— Երուսաղէմէն հասած վերջին նամակ.
ներէ կը տեղեկանանք թէ Ամեն. Տ. Եսայի
Սրբազանի առողջական վիճակը բաւական
գոհացուցիչ է:

— Ասկէ առաջ Ազգ. Վարչութեան կող-
մէ առաջնորդական ընտրելեաց եօթնանուն
ցանկ մը զրկուած էր Ակն, յանձնարարելով
որ անմիջապէս առաջնորդական ընտրու-
թիւն կատարուի:

Ակնայ Գաւառական Ընդհ. Ժողովը սոյն
յանձնարարութեան պատասխաներ է թէ
Ակն փոքրիկ բաղաք մը լինելով, Առաջնորդ-
մը պահելու անբաւական է, ուստի լաւա-

գոյն կը համարին Փոխանորդով մը կառա-
վարուիլ: Այս առթիւ մօտակայ վանքերէն
վարդապետ մը նշանակեր եւ անոր փոխա-
նորդութեան հաստատուիլը խնդրեր են:

— Կայսերական կառավարութեան յանձ-
նարարութեամբ, Տնտեսական Խորհուրդն
որոշեց չրջարեւական ծանուցադրով մը աղ-
դարարել մայրաքաղաքիս Թաղ. Խորհրդոց
որպէս զի թաղերու Մշխութիւն որոշեալ տուր-
քէն աւելի դրամ չը պահանջեն Ժողովը-
դէն. հակառակ պարագայի մէջ պատաս-
խանատու պիտի մնան:

— Երուսաղէմայ դուստական վանուց հայր՝
Տ. Անտօնին հեռագիր մ'ուղղելով ազ Ա-
մեն. Տ. Մելքիսեդէկ Սրբեպիսկոպոս Մու-
րատեան, ջերմապէս շնորհաւորած է Ն.
Սրբազնութեան ընտրութիւնն ի Գահ Հայ-
րապետութեան ամենայն Հայոց: Մուրատ-
եան Սրբազան անմիջապէս հեռագրաւ պա-
տասխանած է առ Տ. Անտօնին, շնորհակա-
լութիւն յայտնելով:

— Ներսէս Վարժապետեան Ուսումնա-
րանի ընկերութեան գործադիր Մասնա-
խումբն իւր կանոնադիրն Ազգ. Կեդրոնա-
կան Վարչութեան ներկայացուցած լինելով
ի վաւերացումն, Տնտեսական Խորհուրդն
յկտ քննութեան պատշաճ դատեց վաւե-
րացնել զայն:

— Ազգ. Ժողովն գումարուելով երէկ
ընդ ատենապետութեամբ Վսեմ. Տիգրան
էֆէնտի Նուսուֆեանի, ինչ ինչ բարեփո-
խութեամբ ընդունեց Ատենապետաց Դի-
ւանի կողմէ պատրաստեալ Ուղերձն ի պա-
տասխանի Ս. Պատրիարք Հօր բացման ճա-
ռին: Ապա Քաղ. Ժողովոյ ընտրութեան
ձեռնարկելով, Ատենապետաց Դիւանի երկ-
պատիկ ցանկին մէջէն Քաղ. Ժողովոյ ան-
դամ ընտրեց հետեւեալ 12 պատ. անձինքն
Նորատուեկեան Գարրիէլ էֆ. Կիւլպէնկե-
ան Սերովբէ էֆ. Նուրեան Յովհաննէս էֆ.
Կիւլպէնկէրտան Տիգրան էֆ. Ունճեան Աբիկ
էֆ. Սեթեան Միհրան էֆ. Մանուկեան Սե-
նքերիմ էֆ. Բարաղամեան Տիգրան էֆ.
Պալլարեան Համազասպ էֆ. Կամարական
Խաչիկ էֆ. Յրէնկեան Յակոբ էֆ. Կոստան-
դեան Կոստանդ էֆ:

Իսկ Քաղ. Ժողովոյ մնացեալ երկու ան-
դամոց ընտրութիւնն համեմատականի մնաց:

Յաջորդ նիստը պիտի գումարի 3 օրէն:

ՍԱՆԱՍՏՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՅԱՅՏԱԳԻՐ 1885-86 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ
ՏԱՐԻՈՅ

ՍԱՆԱՍՏՐԵԱՆ վարժարանը, 1884 թուին հիմնարկուած Կարին քաղաքում Մկրտիչ Սարգսեան Սանասարեանի ծախքով, ունի Գերմանացոց Կրթարան կոչուած Միջնակարգ վարժարաններուն համահաւասար աստիճան, և անոնց պէս իննամեայ ընթացք: Կը բաղկանայ Նախակրթարանէ, որ կը պարունակէ երեք դասարաններ (Ա.էն մինչեւ Գ.), և Կրթարանէ, որ կը պարունակէ վեց դասարաններ (Դ.էն մինչեւ Թ.): Ապագային պիտի բացուի նաեւ մի մասնագիտական շրջան եռամեայ ընթացքով:

Նախակրթարանում կ'աւանդուին հետեւեալ առարկաները.

1. Կրօն (Սրբազան Պատմութիւն),
2. Պատմութիւն,
3. Բնագիտութիւն,
4. Աշխարհագրութիւն,
5. Հայերէն Աշխարհաբառ,
6. Տաճկերէն,
7. Թուարանութիւն,
8. Գեղագրութիւն,
9. Գծագրութիւն,
10. Երաժշտութիւն ձայնական,
11. Մարմնամարզ և Չմըշկութիւն,
12. Պարտիզպանութիւն:

Կրթարանում կ'աւանդուին հետեւեալ առարկաները.

1. Կրօն (Սրբազան Պատմութիւն, Բրիստոնէական Վարդապետութիւն, և Պատմութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ),
2. Պատմութիւն Ազգային, Օսմանեան և Ընդհանուր,
3. Բնագիտութիւն, (Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Հանքաբանութիւն, Երկրաբանութիւն, Բնաբանութիւն և Տարրաբանութիւն),
4. Աշխարհագրութիւն բնական, Աստեղաբաշխական, Բաղաբական և Վաճառականական,
5. Հայերէն Աշխարհաբառ և Դրաբառ,

6. Տաճկերէն,
7. Գաղղիերէն,
8. Անգլիերէն-կամաւոր,
9. Ուսողութիւն (Թուաբանութիւն, Դրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն և Տօմարակալութիւն),
10. Գեղագրութիւն,
11. Գծագրութիւն և Նկարչութիւն,
12. Երաժշտութիւն ձայնական,
13. Երաժշտութիւն գործիական, (Դաշնակ և Չութակ)-կամաւոր,
14. Մարմնամարզ և Չմըշկութիւն,
15. Պարտիզպանութիւն:

Վարժարանը ունի նաեւ Գործատուն, որի մէջ յարմարաւոր աշակերտք կը պարապին կազմարարութեամբ, ատաղձագործութեամբ, զմուսագործութեամբ և այլն: Հիմնադիրը մտադիր է Գործատունը հետզհետէ ճոխացնել և վերածել կատարեալ Արհեստանոցի:

Վարժարանական տարին կ'սկսի Սեպտեմբեր 1 ին:

Նոր (1885-86) վարժարանական տարուան մէջ Վարժարանը պիտի ունենայ Նախակրթարանի Ա. Բ. և Գ. դասարանները և Կրթարանի Դ. դասարանը:

Հիմնադրի ծախքով պիտի պահուին 40 ձրիավարժ գիշերօթիկ աշակերտներ:

Թոշակաւոր գիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտներ կ'ընդունուին հետեւեալ պայմաններուն համաձայն.

1. Աշակերտներ կ'ընդունուին Օգոստոսի 15էն մինչեւ Սեպտեմբերի 1ը:

2. Ընդունելի աշակերտին տարիքը լինելու չէ 7էն վար և 11էն վեր:

3. Ընդունելի աշակերտը բերելու է հետը ծննդեան ու մկրտութեան եւ պատուաստի վկայականներ:

4. Ընդունելի աշակերտը պէտք է լինի մարմնով առողջ և ի հարկին պիտի ենթարկուի բժշկական քննութեան:

5. Դիշերօթիկ աշակերտները վճարելու կանխիկ.

Օսմ. Ոսկի

Մուտքի համար միանուագ 5

Նախակրթարանի համար, տարեկան 18

Կրթարանի համար, տարեկան 20

6. Յերեկօթիկ աշակերտներ վճարելու են կանխիկ .

Նախակրթարանի համար, տարեկան 10

7. Գիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտները կէս Օսմ. ոսկի եւս վճարելու են կանխիկ չմուշկի համար :

8. Գործիական երաժշտութիւն սովորել ցանկացողները իրբեւ մասնաւոր տուրք վճարելու են կանխիկ տարեկան 3 Օսմ. ոսկի. Ձուլթակ սովորողները պարտաւոր են նաեւ հոգալ գործին :

9. Գիշերօթիկներու տարեկան վրձարը կը պարունակէ իւր մէջ ուսումնական և նիւթական բոլոր ծախքերը այն է ուսում, սնունդ, հագուստ և ամէն տեսակ առողջապահական խնամք. ծնողք ստանձնելու չեն ուրիշ որ և է ծախք, և աշակերտք վարժարան ընդունուելու ատեն իսկ բերելու չեն իրենց հետ ու է իրեղէն :

10. Յերեկօթիկներու տարեկան վրձարը կը պարունակէ միայն ուսումնական ծախքերը և ցերեկուսն ճաշը :

11. Յերեկօթիկներու զգեստը ծընողք հոգալու են վարժարանի համադրեստին համաձայն :

12. Աշակերտները նախակրթարանի կամ Կրթարանի ընթացքը սկսելէն վերջը պարտաւոր են շարունակել զայն մինչեւ ցաւարտ :

13. Եթէ տարուան ընթացքում աշակերտը հիւանդութեան կամ ուրիշ որ և է ստիպողական պատճառով բացակայ լինի վարժարանէն, տրուած տարեկան վճարը չկրնար յետ պահանջուիլ ծնողքի կողմէն :

14. վարժարանին երկամսեայ արձակուրդին, որ տեղի կ'ունենայ Յուլիս

և Օգոստոս ամիսներում, ծնողք, եթէ ուղեն, կարող են տուն տանիլ իրենց զաւակները, բայց երթեւեկութեան ծախքը իրենց վրայ է : Իսկ վարժարանում մնացողներուն համար յատուկ վճար չպահանջուիր :

15. Աշակերտ տալ ցանկացողները ըստ կարելոյն կանուխ ծանուցանելու են իրենց որոշումը վարժարանի Տեսչութեան :

ՏԵՍՏՈՒԹԻՒՆ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ

Կարին, Մայիս 1885 .

վարժարանին վերաբերեալ նամակներ ուղղուելու են .

Առ Տեսչութիւն Սանասարեան վարժարանի ի Կարին .

1886 տարւոյ ՊԱՐԶ ՕՐԱՅՈՅՅՆ ԵՒ ԸՆԴՄԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՆ այժմէն պատրաստուելու վրայ լինելով, առեւտրական, արհեստական եւ ուրիշ ծանուցումներ այսօրուքէ կ'ընդունուին :

Առաջնոյն համար, որ 40,000 օրինակ կը ծախուի, ծանուցմունք պէտք է ղրկուին մինչեւ Յունիսի վերջն, եւ երկրորդին համար՝ որ 6000 օրինակ կը ծախուի, մինչեւ Յուլիսի վերջը :

Դիմել առ Գարեգին էֆ. Պաղտատեան, հրատարակիչ այդ օրացուցից, Պոլիս, Չաքմաքճըլար, 13, Յակոբեան խան :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՅՅԵՏՈՄ ՍԵՐՈՒ

Կը պատրաստուի ազնիւ քարտերու վրայ ամեն լեզուաւ գեղեցիկ գրերով, 100 հատը 10 ղուրուշ :

Դիմել առ Գարեգին էֆ. Պաղտատեան, Չաքմաքճըլար, Յակոբեան խան թիւ 13 :

Արտօնատէր

Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ